



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ս. Խ. Հ. Մ.

Հ. Ս. Խ. Հ.

Պոլիտարճեր բոլոր յեկեցների, միացե՛ք.

Մ. ԲԱՅԵՍ

11024

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

Թարգմ. Մ. Տեր-Հովհաննիսյան

355(47)

Ղ-25

№ 6

Կովկասյան և Բանակի Ռազմա-Հեղ. Խորհրդին Կից
Հայկական Խմբագր.-Հրատարակչական Կոլեգիա

ՅԵՐԵՎԱՆ—1924

01 MAR 2010

Ս. Խ. Ն. Ս.

Ն. Ս. Խ. Ն. Ս.

Պողեարհեք բոլոր յեկեցեի, միացե՛ք.

355(47)

Ո-25

Ս. ԲԱՏԵՍ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

Թարգմ. Մ. Տեղեկանքից



№ 6

2/163-59

1102

Կովկասյան Կ. Բանակի Ռազմա-Հեղ. Խորհրդին Կից
Հայկական Խմբագր.-Հրատարակչական Կալեքիա

ՅԵՐԵՎԱՆ—1924

24 JUL 2013

40.872

ԿՕՐՄԻՐ ԲԱՆԱԿ

1. ԴՈՒ ՊԻՏԻ ԿԱՆՉՎԵՍ

Պրզեն անցել և այն ժամանակը, յերբ մենք դեռ նոր էյինք սկսել կառուցել մեր պրոյեկտարական պետութիւնը: Այն ժամանակ մեր ամբողջ շինարարութեան մեջ դեռ չկար հաստատուն և ամուր ծրագիր: Վերջին տարիներս արզեն ամեն ինչ կարգի յե բնկնում: Քաղաքացիների իրավունքներին և պարտականութիւններին վերաբերվող բոլոր գործերում սահմանված են հաստատուն կանոններ, և ամեն մի քաղաքացի (և մանավանդ յերիտասարդութիւնը, վոր պատրաստվում և դառնալ խորհրդային յերկրի քաղաքացի) անհրաժեշտորեն պետք և այդ կանոններն իմանա, պատրաստվի այդ կանոնները պահպանելու:

Յուրաքանչյուր պատանի պարտավոր և իմանալ, վոր յերբ իր 20 տարին բոլորեց, խորհրդային կառավարութիւնը կանչելու յե նրան Կարմիր Բանակի շարքերը, վստահելու յե նրան բանվորա-գյուղացիական հանրապետութեանին-

ված պաշտպանութիւնը: Նրան կնշանակեն
այս կամ այն գունդը, հրացանը կտան ձեռքը
և այնուհետև նրա՝ հեղափոխութեան նվիրված
լինելուց, նրա արիութիւնից և աննկունու-
թիւնից ե կախված, թե մեր յերկիրը թշնամու-
վոտնձգութիւններին ինչ գիմադրութիւն ցույց
կտա:

Այս գործը չափազանց լուրջ և կարևոր ե:
Պետք է արդեն վաղորոք պատրաստվել, վոր
կարմիր Բանակ մտնես լիովին գիտակցաբար,
վորպեսզի գիտենաս, թե ում վրա պետք է
ուղղես հրացանդ: Առաջին և ամենակարեւոր
հարցն է այստեղ, թե ինչո՞ւ և ինչի՞ համար ե
Խորհրդային յերկիրը զմեկ իր կարմիր Բա-
նակը:

2. ՀԻՆ ՅԵՎ ՆՈՐ ԲԱՆԱԿ

Վո՞մանք կասեն՝

— Վոչ մի նոր բան չկա այստեղ: Հա՛վա-
քում ելին բանվոր և գյուղացի յերիտասարդու-
թեանը ցարական բանակը, հավաքում են նրան
նաև խորհրդայինում: Վոչ մի տարբերութիւն
չկա այստեղ:

Մի ուրիշնե՛լ կասի՝

Կարծես թե այստեղ մի ինչ վոր բան կա:
Ախր չե՞ վոր դեռ 1917 թ. Ռուսաստանի և Գեր-

մանիայի մեջ պատերազմ կար, Կերենսկին
դրդում եր իր հին ցարական զնդերը սպանդա-
նոցի և հարձակման Վիլհելմի բանակի դեմ և
այն ժամանակ բոլշևիկները կարծես պատե-
րազմի կատաղի հակառակորդներ ելին և ամեն
տեղ և խրամասներում գտում ելին՝ կորչի՛
պատերազմը: Իսկ այժմ այդ նույն բոլ-
շևիկները մեզ ուրիշ բան են քարոզում:

Այստեղ հարկավոր է բանը հասկանալ: Գյու-
ղացիներից շատերը և քաղաքի բոլոր բանվոր-
ները հիշում են բոլշևիկ կոմունիստների հին
կոչերը պատերազմի դեմ:

Այս արյունահեղ սպանդանոցը սկսվեց
1914 թվ. հուլիս—ոգոստոս ամիսներին: Բոլոր
կառավարութիւնները սկսեցին քաջ տալ իրենց
ճնշված բանվորներին և գյուղացիներին դեպի
ձակատները, վորպեսզի նրանք այնտեղ վոչնչա-
նան կամ սպանեն ուրիշներին իրենց հարըստա-
հարիչների ոգտին: Յե՛վ ահա պատերազմի հենց
առաջին որը բոլոր յերկրներում համարձակ
կերպով հնչեց այն ժամանակ դեռ փոքրաթիվ
բոլշևիկների և նրանց բարեկամների բողոքի
ձայնը: Յարական Ռուսաստանում դրանք ելին՝
ԼԵՆԻՆԸ,

և ապա՝ Պետական Դոմայի բանվորա-
կան ֆրակցիան ընկ. ՊԵՏՐՈՎՍԿՈՒ գլխավորու-

թյամբ, այդ բողոքի պատճառով ցարական կառավարութիւնը նրանց աքսորեց Սիրիոյ։ Կայսերական Գերմանիայում դրանք ելին՝ ԿԱՐԼ ԼԻՔ-ԿՆԵՆՏ, ՌՈԶԱ ԼՅՈՒՓՍԵՄԲՈՒՐԳ, վորոնց նույնպէս վերհեղձր այդ բանի համար բանդ նստեցրեց։

Բոլշեիկներն ասում ելին՝

Յարական Ռուսաստան, թե կայսերական Գերմանիա, «ազատ» Անգլիա, թե «հանրապետական» Ֆրանսիա—այս բոլոր յերկրներում իշխանութիւնն ու յերկրի բոլոր հարստութիւնները գտնվում են հարուստների—կապիտալիստների և կալվածատերերի ձեռքին։ Այս սպանդանոցը, վոր նրանք կազմակերպել են, ծառայում է յերկրներ խլելու, բուրժուազիայի հարստացման համար։ Ինչով էլ վոր վերջանալու լինի պատերազմը, ով էլ վոր հաղթելու լինի այստեղ, Անգլիան Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ, թե Գերմանիան—բանվորը բոլոր յերկրներում էլ առաջվա նման պիտի մնա ճրնջըված։ Բանվորի վզի լուծն ավելի ևս պիտի ծանրանա, պիտի աղքատանան միայն աշխատավորներն և պիտի հարստանան կապիտալիստները միայն։ Պատերազմը աշխատավորներին պետք է։ Բանվորներն ու գյուղացիները մեկը մյուսի նկատմամբ վոչ մի թշնամական շահ

չունեն։ Պատերազմը հարկավոր է միայն կապիտալին։ Ուստի այս պատերազմին բանվորները պիտի ամենավճռական պատերազմ հայտարարեն։

Բայց այդ դեռ քիչ է։ Բոլշեիկները դիմում ելին բոլորին և ամեն մեկին, և ասում ելին՝

Լավ մտածիր անցուդարձի վրա։ Բոլոր յերկրների կապիտալիստները ցանկացան ժողովուրդներին իրար դեմ հանել, նրանց հարկավոր եր իրենց շահերի համար համաշխարհային սպանդանոց սարքել և այդ նրանց աջողկեց։ Իսկ հետևանքն այն յեղավ, վոր այժմ ունենք տասը միլիոն սպանված, մոտ քսան միլիոն վիրավոր, ավերակ յերկրներ, աղքատութեան դուռը հասած և ուժաթափ յեղած բանվորական և գյուղացիական ժասսաներ։ Յերկար պետք է համբերեն, բանվոր դատակարգն ու գյուղացիութիւնը։ Չէ՞ վոր բոլորիս պետք է պարզ լինի, վոր կապիտալիստների և կալվածատերերի իշխանութիւնը բանվոր դատակարգի և գյուղացիութեան համար մահ է նշանակում։ Ժամանակը չէ՞ այս բոլորին վերջ դնելու։ Յե՛վ յեթե կապիտալիստը գտնվորին և գյուղացուն զինել է հրացանով, ապա չպէտք է այդ բանվորի և գյուղացու միջից յեղած զինվորը այդ հրացանն

ուղղի կալվածատերի և կապիտալիստի դեմ: Հրացանն ասում էյին բոլշևիկները, լավ բան է և թշնամուն ել շեշտակի յե խփում և մահացու յե նրա համար: Միայն հարկավոր է այդ հրացանն ուղղել բանվորի և գյուղացու խակահան թշնամու, կապիտալիստների և կալվածատերերի իշխանության դեմ:

— Կորչի՛ կապիտալիստների պատերազմը, կեցցե՛ բոլոր յերկրների աշխատավոր մարդկանց յեղբայրությունը: Վերածենք իմպերալիստական (կապիտալիստական) պատերազմը քաղաքացիական պատերազմի: այսինքն իրար հետ միացած բանվորների և գյուղացիների զինված պայքարի՝ կապիտալիստների և կալվածատերերի կառավարության դեմ:

Յարին տապալելուց հետո, 1917 թվին բոլշևիկները կոսսակցությունը սկսում է դառնալ մի մեծ ուժ: Նրա շուրջն են սկսում խմբվել հեադհետե նորանոր բանվորներ և գյուղացիներ ճակատում, ֆաբրիկներում ու գործարաններում և գյուղում: Այն ժամանակ բոլշևիկների կառավարությունը զինվորական, բանվորական և գյուղացիական մասսաներին տարավ իրագործելու այն ծրագիրը, վոր նա հայտարարել էր դեռ 1914 թվին համաշխարհային սպանդանոցի առաջին օրը:

Բոլշևիկները ճակատի զինվորներին հրավիրում էյին յեղբայրանալ գերմանական բանակի զինվորների հետ: Վճռական պայքար էյին մղում Կերենսկու կառավարության դեմ, վոր ձգձգում էր պատերազմը ուս կալվածատերերի և կապիտալիստների ոգտին: Պահանջում էյին դադարեցնել այդ անպետք և ֆլասակար սպանդանոցը: Հրավիրում էյին վերջապես բանվորներին, գյուղացիներին և զինվորներին ցաքական կառավարության տված զենքը ոգտագործել Ռուսաստանի կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը իսպառ վոչնչացնելու և յերկրում Խորհրդային իշխանություն հաստատելու համար:

Հրացանը ձեռքիդ կովիր քո իշխանությունը ստեղծելու համար— ահա թե ինչ էյին սովորեցնում բոլշևիկները մեր յերկրի աշխատավոր մասսաներին:

Յեվ սովորեցրին: Աշխատավոր ժողովուրդն աստամբեց զենքը ձեռքին: Դեն շարտեց իր ուսերից բոլոր գիշատիչներին և շահագործողներին: Կոմունիստ-բոլշևիկների կոսսակցության զեկավարության տակ բանվորներն ու գյուղացիները ստեղծեցին աշխարհիս յերեսին առաջին Աշխատանքի հանրապետությունը և հրացանը ձեռքներին պաշտպանեցին այդ հանրա-

պետութիւնը նրա բոլոր թշնամիներին:

Այդպիսով բոլշեիկներն ինչպէս առաջ ե-
յին, այնպէս ել հիմա մնում են ամենակոտա-
զի հակառակորդ պատերազմի և ռազմական
գործի, յերբ այդ պատերազմն ու ռազմական
գործը ծառայում է կապիտալին: Բայց նույն
այդ բոլշեիկներն ամեն կերպ խրախուսում են
և՛ հրացանը և՛ զնդացիքը և՛ տանկը և՛ այնքո-
ւպանը, յերբ սրանք ծառայում են բանվոր դա-
սակարգին և գյուղացիութեանը կապիտալի լը-
ծից ազատելու համար:

Այս է պատճառը, Վոր յերբ մեկն ու մեկը
ասի, թե տեսե՛ք Վոշ մի տարբերութիւն չկա
մեր այժմյան և ցարական ժամանակների մեջ,
թե իբր ցարի ժամանակ ել, Խորհրդային իշխա-
նութեան որոք ել, իշխանութիւնները քաշ եյին
տալիս և քաշ են տալիս յերիտասարդներին բա-
նակի շարքերը. հարկավոր է այդպիսի պակա-
սամիտ մեկին բացատրել և սովորեցնել իրերի
արմատը գննել: Հարկավոր է նրան բացատրել,
վոր բանը հրացանի և զնդացի մեջ չի, այլ
թե ինչի համար են գործածվում այդ հրացանն
ու զնդացիքը:

Ճիշտ է, վոր ցարի ժամանակ մեծ բանակ
կար և վոր բանվոր ու գյուղացի յերիտասարդ-
ներին քաշ եյին տալիս այդ բանակի շարքերը,
վոր միլիտնավոր զինվորներ քշում եյին զեպի

ճակատները և նրանց աֆտեղ փշաղնում: Այս
բանակի ոգնութեամբ ցարը լայնացնում էր իր
իշխանութեան սահմանները և ստրկացնում էր
նորանոր ժողովուրդներ, վորից աճում եյին
ոռւս կապիտալիստների և կալվածատերերի հա-
լըստութիւնները: Այդ նույն ցարական բանակը
ծառայում էր կալվածատերերի և կապիտալիստ-
ների իշխանութիւնն աշխատավոր ժողովուրդից
պաշտպանելու համար: Յերբ գյուղացիներն ապ-
րտամբում եյին կալվածատիրոջ դեմ, յերբ
բանվորները Փարբիկներում և գործարաննե-
րում գործադուլ եյին հայտարարում կապիտա-
լիստի դեմ, կապիտալիստն ու կալվածատերը
զնում եյին ցարի կամ նահանգապետի մատ և
ասում եյին՝

— Դո՛ւ, ցար, Ռուսաստանի առաջին կալ-
վածատերը և կապիտալիստն ես: Դու ահագին
ստացվածքներ և գործարաններ ունես Ուրալում:
Այնտեղ աշխատում են քեզ համար բանվորնե-
րն ու գյուղացիները: Տեսնում ես նրանք այժմ
ապստամբել են մեր դեմ: Յեթե նրանց սանձը
չքաշես, վայ թե քեզնից ու մեր ձեռքից բոլո-
րովին խլեն մեր հողն ել, Փարբիկներն ու գոր-
ծարաններն ել: Ուրեմն անողնական մի թողնիք
մեզ, ոգնութեան ուղարկիր քո ցարական զնդերը:

Յե՛վ ցարն ուղարկում էր իր զնդերը գյու-

դերն ու գործարանները: Անհատակացող, ցարական դորանոցում բթացած և կալվածատեր ըսպանների ու գեներալների հրամանատարութեան տակ գտնվող զինվորը գործում և իր պետերի հրամանով: Պատժիչ արշավախումբ, գյուղացիների ընդհանուր ձեռն, գնդակահարութիւն — ահա թե ինչպես ելին ցարական զնդերը ապրտամբված աշխատավորութեան հախից պալիս:

Այժմ համեմատենք յերկու գունդ իրար հետ. զնդերից մեկը սրանից բաւն տարի առաջ 1902 թվին ճնշում եր գյուղացիական անկարգութիւնները Պոլտավայի և Վորոնեժի նահանգում, իսկ մի ուրիշ գունդ բանվորներից և գյուղացիներից նոր կազմված 1919 թվականին պաշտպանում և բանվորական Պետրոգրադը գեներալ Յուդենիչից կամ քշում և գեներալ Կոլչակին Սովետական յերկրից: Արդյոք տարբերութիւն կա յերկու զնդերի մեջ, թե վոչ:

3. ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄԿԵԼ ՅԵՎ ԱՃԵԼ ՅԵՎ ԻՆՉ Ե ՏՎԵԼ ՅԵՐԿՐԻՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

Մեզ մոտ չեր կարող այժմ Խորհրդային իշխանութիւն գոյութիւն ունենալ, բանվոր դասակարգը չէր տեսնի իր գործարանների և գյուղացին հողի յերեսը, յեթե իրենք բանվորներն ու գյուղացիները ժամանակին ձեռք չըզարնեյին նոր, Կարմիր Բանակ ստեղծելու գործին:

Մի անգամից չկազմվեց այդ բանակը: Մի անգամից չընդունեց իր այն ձևերը, վոր մենք

այժմ տեսնում ենք: Կարմիր բանակը ծնունդ և առնում այն որը, յերբ բանվորն առաջին անգամ իր ձեռքն և առնում հրացանն իր բանվորական գործը պաշտպանելու համար, ստեղծում և առաջին զինված բանվորական շուկաւը: Ուստի կարելի յե ասել, վոր իր սկիզբը Կարմիր Բանակը կարող և հաշվել դեռ 1905 թվից, մեր առաջին հեղափոխութեան բանվորական ապստամբութիւնների որից:

Յերբ բանվորները բարրիկադների վրա Մոսկվայում, մարտիկները հրացանը ձեռքներին բանվորական շուկաւներում, կռվում ելին ցարական զորքերի դեմ 1905 թվ. դեկտեմբերին, յերբ նույն որերին յերկաթուղագծի բանվորները Մոսկվայի մոտերքը պաշտպանում ելին գիծն ու կամուրջները, ցարական զորքերը Մոսկվա չթողնելու համար — այս արդեն Կարմիր Բանակի սաղմն եր: Բայց այս առաջին հեղափոխութեան ժամանակ բանվոր դասակարգը չկարողացավ հաղթանակել: Նրանք ջարդվեցին ցարական զորքերի ձեռքով և պայքարը ձգգձգվեց ամբողջ 12 տարի, մինչև 1917 թվականը: Յարական կառավարութեան անկմամբ դեռ առաջին ամիսները (դեռ Կերենսկու կառավարութեան որոք) Պիտերի և խարկովի, Ուրալի և Դոնի բանվորներն իրենց իրավունքների պաշտ-

պանութեան համար սկսեցին հաժարել սկզբում փոքրաթիվ բանվորական շուկաներ, պատրաստվելով ապագա մճռական զինված պայքարի: Այս բանվորական շուկաները «Կարմիր Գլարգիա» անունն ստացան,

Մենք արդեն պատմեցինք, թե ինչ եր կատարվում ճակատում 1917 թվին: Ցարական բանակը քայքայվում եր չկամենալով այլևս կռվել կալվածատերերի և կապիտալիստների ոգտին: Գնդերում որեցոր աճում եր բոլշևիկների կուսակցութեան ազդեցութեւնը, վեր կոչ եր անում զինվորներին ոգնեն բանվոր դասակարգին բուրժուազիայի լուծել տապալելու համար մղած պայքարում: Յերը ճակատում պատերազմը վերջացավ այդ բոլշևիկյան գնդերի մի մասը չցրվեց աները: Այդ գնդերը շարունակեցին կռիվը մինչև վերջը հանուն Հոկտեմբերյան հեղափոխութեան հաղթանակի:

Այդ գնդերի շարքերն են լցվում մեծ գործարանային քաղաքների բանվորները, վորոնք թողնում են աշխատանքը գործարանում և հրացան են վերցնում պաշտպանելու իրենց բանվորական խորհրդային իշխանութեւնը:

Սպիտակ շուկաների դեմ մղված առաջին կռիւները իր վրա չե վերցնում Կարմիր Գլարգիան: Այդ Կարմիր Գլարգիայի շուկաները

հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) տիրում են Պիտերի պալատներին, զինաթափ են անում բուրժուազիայի կողմը բռնած շուկաները և ոգնում են Պիտերի բանվորներին իշխանութեան գլուխն անցնելու: Յերը դրանից հետո Պիտերում յունկերները առաջին անգամ ապստամբվում են խորհրդային իշխանութեան դեմ, ապստամբներին շարդ ու փուրդ են անում Կարմիր Գլարգիայի շուկաները: Թե Մոսկվայում, Թե Ռոստովում, Թե Կիևում, Թե Սարկովում Կարմիր Գլարգիայի շուկաները կռվում են խորհուրդների իշխանութեան պաշտպանութեան համար: Բոլշևիկյան գնդերին ճակատում այդ որերին վիճակվում և դիմադրել հիանալի զինված, ահագին գերմանական բանակին, խորհրդային յերկրի ամեն մի թիւ հողը պաշտպանելով գերմանական գեներալներին:

1918 թվին իշխանութեւնը կորցրած կալվածատերերը և կապիտալիստները ամբողջ յերկրի յերեսից հաժարում են իրենց շուկաները Դոնի և Վոլգայի ափերին հին ցարական գեներալների դեկավարութեան տակ: Նրանք կազմակերպում են իրենց ոպիտակ բանակը կալվածատերերի և կապիտալիստների զավակներից և խաբված աշխատավորներից, վորպեսզի զինված ուժով տապալեն խորհրդային իշխա-

նությունը և տերերին վերադարձնեն նրանցից խլված հողերն ու գործարանները, Նրանց ոգնության են շտապում մենշևիկներն ու եսերները, փորոնց անունից առաջ կառավարում երկերենսկու կառավարությունը: Փողով սրանց ոգնում են բանկիրները, կալվածատերերը և կապիտալիստները: Բայց նրանք ունեյին նաև ավելի հզոր նեցուկ: Ֆրանսիայի, Անգլիայի, Յապոնիայի և Ամերիկայի բուրժուական կառավարությունները չեն կարողանում հաշտվել, վոր ուսու բանվորներն ու գյուղացիներն համարձակվել են իրենց աշխատանքի հանրապետությունն ստեղծել: Նրանք շտապում են ոգնության հասնել ուսու կալվածատերերին և կապիտալիստներին և սկսում են ուսուական սպիտակ բանակներին զինամթերք, հանդերձանք և փող մատակարարել: Պայքարը սկսվում է 1918 թվի ամառը. Չեխո-Սլովակիյան լեզիոնները, վորոնք դեռ ցարի որոք կազմվել էյին ավստրիական ռազմագերիներից, Վոլգայում և Սիբիրում ապստամբում են Սորհրդային իշխանության դեմ: Սորհրդային հանրապետությունն ամեն կողմից շրջապատվում է նոր ճակատների գծով, վոր կազմվում է սպիտակ-գվարդիական օֆիցերական սվազակախմբերից և Չեխո-Սլովակիյան լեզիոններից:

Սորհրդային հանրապետության այդ ծանր ժամին փոքրաթիվ Կարմիր Գվարդիան և հին բանակի մի քանի գնդեր միասին, չեյին կարող լինել Սորհրդային իշխանությունը կորստից: Հարկավոր եր բոլոր ուժերի և միջոցների լարումը: Սորհրդային կառավարությունը ժամանակին նկատեց վտանգը և կոչ արավ աշխատավոր ժողովրդին՝ Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները կարողացան տապալել կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը — հարկավոր է նաև կարենալ այժմ պահել պաշտպանել այդ իշխանությունը: Հիանալի զինված և ամուր կազմակերպված սպիտակ զորամասերին, հարկավոր է հակադրել նույնքան ամրակուռ և միևնույն ժամանակ մեծաքանակ բանվորա-գյուղացիական բանակ:

Դեռ 1918 թվականի փետրվարի 23-ին հրապտակվել եր կանոնավոր Կարմիր Բանակի կազմակերպման գեկրետը: Ամառվանից նրա շարքերն սկսում են լրացնել պարտադիր զորակոչի հիման վրա կանչված հասակներով: Նորակոչները Սորհրդային կառավարությունն սկսում է կազմակերպել կանոնավոր գնդեր, կառուցելով այդ գնդերը ռազմական արվեստի բոլոր պահանջների համաձայն: Սիրտ կարգապահությանն ու կառավարության կողմից նշա-

նակի բովից անց ե կենում մոչ պակաս հինգ միլիոն բանվոր ե գյուղացի։ Մրանք բոլորն ել հիշում են ռազմական պայքարի բոլոր դասերը ե կարող են յերթաասարգներին միշտ պատմել, թե ինչպես ե այդ Կարմիր Բանակը բանվորա-գյուղացիական յերկիրը փրկում նրա բոլոր թշնամիներից։

Գեներալ Դենիկինը 1919 թվ. հասել եր համարյա Տուրա ե արդեն պատրաստվում եր մտնել նույնիսկ Մոսկվա։

Նրա անցած ամբողջ ճանապարհովը, հետևից գնում եյին կալվածատերերն ու հին իսպրավներէները, ամեն տեղ վերականգնելով իրենց իշխանությունը, վերադարձնելով կալվածատերերին նրանց հողը ե սոսկալի դաժանությամբ գյուղացիներից հանելով իրենց վրեժը նախկին պարսությունների փոխարեն։ Նույն տարին Մամոնտովը կատարում ե իր հեծելա-գործի արշավը, հասնելով մինչև Տամբով ե ամեն տեղ քար ու քանդ անելով բանվորական ե գյուղացիական կազմակերպությունները։ Ի պատասխան այս արշավին Տրոցկին տալիս ե «Պրոլետար ձիու վրա» լուղունգը ե ծնվում ե Կարմիր հեծելազորը, Բուլգոյննու ապագա բանակները։ Գեներալ Յուգենիչը 1919 թվ. աշնանը կանգնած եր Պիտերին դեմ առ դեմ, զստահ,

փոր իրեն աշողվելու յե տիրանալ Կարմիր Մայրաքաղաքին։ Գեներալ Կոլչակը նեղում եր ինտրիգային իշխանությանը, արեւելից տիրելով արդեն Կազան քաղաքին։ Այդ նույն որերին անդլիական, ֆրանսիական, յապոնական ե ամերիկական զորքերը տի են յենում Մուրմանսկի, Սըխանգելսկի, Վլադիվոստոկի, Ուկեսսայի նավահանգիստներում, սպիտակներին ողնության շտապելով։ Ամեն տեղ բեհամլին հանդիպում եր համառ յեւ վնասկան դիմաւորայան։

1920 թվականին Սովետական հանրապետության դեմ պատերազմի յե դուրս գալիս սպիտակ կեհատայնը, Պիլսուդսկու գլխավորությամբ։ Սըկմոյան սահմանների ամբողջ յերկարությամբ առաջ ե գալիս մի նոր ճակատ։ Սպիտակ կեհական զորքերը զրավում են Կիյեւը, անցնում են Դնեպրը ե մանում են Չերնիգովի նահանգը։ Հյուսիսում նրանք ձգտում են դեպի Սմոլենսկ։

Նրանց նպատակն եր գրավել Լեհաստանի ե Դնեպրի մեջ գտնվող ամբողջ շրջանը, փրկելու լեհ կալվածատերերին վերադարձնեն նրանց այդտեղ պատկանած հողերը։ Սպիտակ կեհատանի առաջնորդ Պիլսուդսկին ուզում ե Սովետական հանրապետությունը բաժան-բաժան

անել, կտրել նրանից Ռւկրայնան և այլափոփանով հանրապետութեան գոյութեան իսկ սպառնալիքի տակ զնել: Սկսվում է լուրջ պայքար: Խորհրդային իշխանութիւնը նորից գորակոչի յե յենթարկում բանվոր և գյուղացի մասսաները, կազմվում են բազմաթիվ դիվիզիաներ, ճակատն ամրացվում է: Կարմիր Բանակը համարձակ և վճռական մի զրոհով բռնում է սպիտակ լեհական զորքերը, հասնելով մինչև Վարշավա և վերջապես ստիպում է լեհական պաներին Խորհրդային կառավարութեան հետ խաղաղութեան կնքել:

Բայց ռազմական պայքարը դեռ չի վերջացած: Սպիտակ Լեհաստանի հետ մեր վարած պատերազմի ընթացքում հարավում կարողանում է ամրանալ Բարոն Վրանգելը: 1920 թվականի վերջում Կարմիր Բանակն իր ամբողջ ուժը դարձնում է Վրանգելի վրա և նրան Սև ծովն է շարտում: 1921 թվ. սկզբներին Կարմիր Բանակը բոլոր ճակատներում հաղթող է դուրս գալիս և կարողանում է Խորհրդային հանրապետութեան համար խաղաղութեան ձեռք բերել:

Քաղաքացիական կռիւի ամենածանր բուլեներին, յերբ հանրապետութեանն ամեն կողմից նեղում էին գեներալ Կոլչակի, Յուդենիչի, Դե-

նիկինի սպիտակ ջոկատները, բանվորա-գյուղացիական իշխանութեանը տարածվում էր Մոսկվային և Պետրոգրադին անմիջապես կից մի քանի փոքրաթիվ նահանգների վրա: Այժմ Կարմիր Բանակի հաղթանակներից և բոլոր սպիտակ գվարդիականների ջարդ ու փուլդ լինելուց հետո մեր «Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան Միութեան» տերրիտորիան միացնում է համարյա այն բոլոր հողերը, վոր մի ժամանակ ցարի իշխանութեան տակ էին գտնվում: Այդ նշանակում է, թե այն ամբողջ տարածութեան վրա, ուր մի ժամանակ թագավորում էր ցարը, կալվածատերերն ու կապիտալիստներն, այժմ կառավարում են բանվորներն ու գյուղացիները, իրենք իրենց կյանքը կազմակերպելով և իրենց տնտեսութեանը կառավարելով: Կարմիր Բանակը ամրապնդել է բուլետների յեւ գյուղացիների իշխանութեանը նախկին ցարի հողերի վրա:

Յեթե 1917 թվին բանվորներն և գյուղացիները տապալեցին կալվածատերերի և կապիտալիստների իշխանութիւնը, կապիտալիստները, վորոնք իշխում են ամբողջ աշխարհում, ամենեին չէին կամենում այս հանգամանքի հետ հաշտվել: Նրանք, հարուստ և ուժեղ, հիւանալի զինված, Խորհրդային հանրապետութեան

դեմ սկսում են ռազմական գործողություններ, պահանջելով նրանից կատարյալ հնազանդություն և գործարանների ու հողերի վերադարձը գործարանատերերին ու կալվածատերերին:

Կարմիր Բանակը նրանց զորքերն էլ և ջարդում լինի ստիպում է նրանց խոստովանել բանվորա-գյուղացիական ինխանության ուժը լինելու նրա հետ առեմտական հաղթանակություններ սկսել:

Բանորներն ու գյուղացիները 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունը կատարեցին, փորձեցին տիրապետեն հողին գործարաններին և ֆաբրիկներին, և իրենց ամբողջ յոռանգն ուղղեն բանվորական և գյուղացիական մասսաների բարեկեցությունն ավելացնելու կողմը: Գերմանացի դեմ մղած չորսամյա պատերազմից ուժասպառ լինած իրերիցը խաղաղության կարիք էր դրում անտեսական մեծ և լուրջ աշխատանքի համար: Ուստի սպիտակ-գվարդիականներն ու ոտարեկրյա կապիտալիստները խանդարեցին այդ խաղաղությունը, փոր բուշեիկները ձեռք էլին բերել, դադարեցնելով 1918 թվին պատերազմը Գերմանիայի դեմ: Այդ յերեք տարվա քաղաքացիական պատերազմի ընթացքում մեր անտեսությունն ավելի ևս թուլացավ, ռազմական պայքարի հետագա շա-

րունակումը կարող էր սպառնալ քայքայմամբ: Կարմիր բանակը, բեկամիներին ջարդելով հակասում, Խորհրդային յերկրի համար խաղաղություն ձեռք բերելով, հնարավորություն ստացի գյուղացիությանը լինի բանվոր դասակարգին խաղաղ անտեսական շինարարությամբ զբաղվել:

Ահա սրանք են Կարմիր Բանակի յերախաիքը յերկրի դիմաց:

4. ՅԵԹԵ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ Ե ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ, ԱՊԱ ԻՆՁՈՒ ԶԵՆ ԱՐՁԱԿՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Յեվ լակապես, փոր իրենք բուշեիկներն առում են՝ բուրերին հաղթեցինք, թշնամիներին ջարդեցինք և խաղաղություն ձեռք բերինք, էլ ինչու շարձակենք Կարմիր Բանակն իրենց տուն ու տեղը, փորպեսզի ամեն մի բանվոր և գյուղացի կարողանա իր գործով զբաղվել, իր աշխատությունն ամրացնել և հանրապետությունն սկսել խաղաղ աշխատանքի ասպարիզում:

Բայց արդյոք կարող է Խորհրդային հանրապետությունը մնալ բուրերովն առանց Կարմիր Բանակի, այս հարցը կարևոր հարց է, ուստի պետք է սրա վրա մի փոքր ավելի մանրամասն կանգ առնել:

Հարկավոր է լավ հասկանալ, թե ինչու էլին

Խորհրդային իշխանության դեմ այդպիսի համառ կռիվ մղում մեր թշնամիները — ուռւ սպիտակ-գլխադիրականները և ոտաբերկրյա կապիտալիստները: Արդյոք այդ պատահականություններ թե մեր թշնամիների սխալն էր: Մեր թըշնամիների ռազմական պայքարը Խորհրդային հանրապետության դեմ՝ յերբեք ել պատահականություն չէր, այլ միանգամայն հասկանալի մի բան, այդ պայքարը առաջ եր գալիս իսկական անհաղթելի այն թշնամությունից, վոր գոյություն ունի Խորհուրդների հանրապետության և այն պետությունների միջև, ուր իշխում է կապիտալը:

Նայեցեք քարտեզին և դուք կտեսնեք, վոր Խորհրդային հանրապետությունը չորս կողմից շրջապատված է կապիտալիստական պետություններով: Այդ յերկրներում ամբողջ աշխատեսական կարգը և իշխանությունը նույնպես են կազմակերպված, ինչ վոր մեզանում հին կարգերի ժամանակ, մինչև Հոկտեմբերյան հեղափոխություն, ցարի և կերենսկու որդե: Հողը ֆաբրիկաներն ու գործարանները կալվածատերերի և կապիտալիստների ձեռքումն են: Նրանք հենց իրենք ել կառավարում են յերկիրը վոստիկանության և գործերի ոգնությամբ: Բանվորական և գյուղացիական մասսաներն ապրում

են աղքատության մեջ և նրանց աշխատանքից ոգտվում է կապիտալիստն ու կալվածատերը: Յեվ հասկանալի չե, վոր հարուստ տերերի և աղքատության զիրկը նետված բանվորա-գյուղացիական մասսաների միջև այդ յերկրներում ամենակատաղի կռիվ է տեղի ունենում՝ դասակարգերի կռիվ: Բանվոր դասակարգը աշխույժ գտնում է նույն բանին, ինչ վոր ձեռք են բերել բանվորներն ու գյուղացիք մեր յերկրում, այսինքն՝ ձգտում է իր իսխանությունը հասնաճել մեր բանվորա գյուղացիական հանրապետությանն ուրիմակով: Հարուստ դասակարգերն այդպիսի ձգտումների համար, իհարկե, ամեն կերպ հալածում են իրենց յերկրի գիտակից բանվորներին և գյուղացիներին, նրանց բանտարկելով, աքսորելով, տաժանակիր աշխատանքի և մահվան դատապարտելով: Իր այդ վայրագ ատելությունը բանվոր դասակարգի դեմ կապիտալը տարածում է նաև մեր Խորհրդային հանրապետության վրա: Բոլոր յերկրներում բանվորներն ու գյուղացիները հանձինս մեր Խորհրդային հանրապետության տեսնում են իրենց բարեկամին, պատրաստ են ամեն ուր մեզ ոգնելու, վորովհետև մեր հանրապետությունն ստեղծվել է բանվոր դասակարգի և գյուղացիության պայքարի դնով: Իսկ ամ-

բող՝ աշխարհի կապիտալիստները հենց սրա համար ել ատում են մեր հանրապետությունը և պատրաստ են ամեն ինչ ձեռնարկել, փորպեղի տապալեն խորհրդային իշխանությունը և իշխանությունը վերադարձնեն սուս կապիտալիստներին և կալվածատերերին:

Կապիտալիստական կառավարություններին մեր խորհրդային հանրապետության դեմ տարած գաժան ատելության յերկրորդ պատճառը առաջ է գալիս հենց կապիտալի բնույթից և նրա ամբողջ աշխարհին հարստությունները տիրապետելու ձգտումից: Մեր յերկիրը հարուստ է շատ ախպիսի բաներով, փոր ախքան անհրաժեշտ են յերոպական կապիտալին: Պաղարքեր հողը, կտարելադարձված մշակման պետքում, կարող է տալ հացի սոսա բերք: Յերկրում բանում է կտավառ, կանեփ, ծխախոտ, բամբակ, բազմաթիվ անտառներ և նրանց մեջ ամեն տեսակ գազաններ: Ուրալի լեռներում պղինձ, յերկաթ, կապար (արձիճ), Դոնի և Կուզնեցկի ավազանում՝ շատ քարածուխ, Վերջապես Կովկասում կան նավթի անաղին սղաշարներ, փորի հետեից այժմ ընկած են ամբողջ աշխարհին կապիտալիստները, փորովհետև նավթը նրանց հարկավոր է արդյունաբերության և ծովային նավատորմի համար:

Համախառնալիս կապիտալը այդ բոլորի վրա ալք ունի, ցանկանում է այդ բոլորի անբաժաններ լինել: Համաշխարհային կապիտալը ուզում է մեր յերկիրը իրեն յենթարկել, փորպեղի գուրս կորզի նրա բնական հարստությունները և նրա վզին փաթաթի իր ապրանքները: Նա կամենում է մեր հանրապետության բանվորներին և գյուղացիներին իր ճորտը շինել:

Կա մի յերրորդ պատճառ ևս, փոր ոտարյերկրյա կապիտալիստները ամբողջ ժամանակ այգպիսի ատելությամբ են վերաբերվել մեր խորհրդային հանրապետությանը: Մեր հեղափոխությունը շատ ոտարերկրյա կապիտալիստների անմիջական կորուստ է պատճառել: Բանվորա-գյուղացիական յերկիրը դադարեց ոտարյերկրյա կապիտալին ցարական պարտքերը վրձարելուց: Մեր իշխանությունը, բոլոր կապիտալիստներից խելով ֆարքիկները, գործաբանները, խելց նաև ոտարերկրացիների ձեռքից: Ոտարերկրյա կապիտալիստները մինչև որս ել չեն կարողանում մեզ այդ կորուստը ներել: 1922 թվականի սկզբներին, նրանք կործես վճում են բանակցության մեջ մտնել խորհրդային կառավարության հետ, նրան ընդհանրապես ճանաչելու համար: Կազմակերպվում է կոնֆերանս նախ Զենովայում, հետո Հոագա-

յում, ուր մեր կառավարութեան մասնակցութեամբ բանակցութեաններ են վարվում. սակայն այդ բոլոր բանակցութեանները անհետևանք են անցնում միայն այն պատճառով, վոր ոտար-յերկրյա կապիտալիստները մեզնից պահանջում ելին հին ցարական պարտքերը վճարել:

Այս վերջին պատճառը յերբեք տմենագրել-խափորը չե և չպետք ե կարծել, թե ոտարերկ-րյա կապիտալիստական կառավարութեանները վոչ մի դեպքում չեն հրաժարվի իրենց այդ պահանջից: Մենք այդ տեսնում ենք Գերմանա-կան կառավարութեան որինակից, վոր հրաժար-վեց կապիտալիստների վեասները հատուցելու պահանջից: Մեր Սովետական պետութեանը որըստորե ուժեղանում ե: Մեր խաղաղ տնտե-սական այն աշխատանքը, վոր մենք թափում ենք կարմիր Բանակի հովանու տակ, ավելի և ավելի մեծ հետևանքներ ե տալիս: Մեր յերկրի բնա-կան հարստութեաններն այնքան մեծ են, վոր ոտարերկրյա կապիտալը յերկար չի կարող անտես առնել մեր յերկիրը և փոխադարձ տըն-տեսական կապ չստեղծել մեզ հետ, վորովհետե ինքը կապիտալը կարիք ունի կապվելու մեր տնտեսութեան հետ, վորպեսզի կարողանա իր յերկրի քայքայմանը վերջ դնել: Ուստի շատ կարելի յե, վոր դեռ մոտակա տարում, ոտար-

յերկրյա կառավարութեանները հույսները կըտ-րած խորհրդային իշխանութեան անմիջական կո-րուստից և տեսնելով այն տոկունութեանը, վոր ցույց ե տալիս խորհրդային իշխանութեանը իր անկախութեանը պաշտպանելիս՝ հենվելով կարմիր Բանակի վրա, և խորհրդային հանրա-պետութեան ինքնատոկունութեանը,—մեր կա-ռավարութեան հետ սերտ հարաբերութեանները մեջ կմտնեն նրա լիակատար ճանաչման գնով:*)

Բայց մենք պետք ե ամեն բույն հիշենք և բոլորին ել հիշեցնենք, վոր այդ ճանաչման տուտը միայն այն պատճառով ե բացվել, վոր կարմիր Բանակը բացարձակ ուղղման պայ-քարի գնով մեր հանրապետութեանը կարողա-ցավ պաշտպանվել զինված հարձակումներից և վոր ոտարերկրյա կապիտալիստները խաղաղ քաղաքականութեան ճանապարհն են բռնում իրենց յերկրի բանվոր դասակարգի ճնշման տակ միայն, վոր ոտարերկրյա կապիտալիստները

*) Հեղինակի այս գուշակութեաններն այսօր իրա-կանութեան են դառնում, վորովհետե Յեկրոպական մի շարք պետութեաններ արդեն ճանաչել են ՍՍՀՄ-ը և առևտրական ու գիտնագիտական հարա-բերութեաններ են սկսել մեզ հետ: Անգլո-խորհրդային վերջին դաշնագիրը գալիս ե մի ավելորդ անգան ես հաստատելու հեղինակի կարծիքը: (Թարգմանիչ)

հարկադրված են մեզ հետ խաղաղության ուղին բռնել, իսկ իրենք մնում են մեզ թշնամի:

Թշնամիների հետ թշնամաբար ել պետք է պահես քեզ. խոտորնակին խոտորնակ: Կապիտալիստական աշխարհը մինչև ատամները զինված է: Այսօր այդ ազառազինությունն ավելի չէ աճել, քան մինչև համաշխարհային պատերազմի նախորդակին եր, այսինքն, տասը տարի սրանից առաջ: Յեվրոպայի բոլոր կապիտալիստական յերկրներում զենքի տակ են 4,355,000 զինվոր, փոխարեն 1913 թվականի 3,747,000-ի: Բոլոր բուրժուական պետությունները ծովային ռազմական նավատորմիդը սրբատորե ուժեղացնում են:

Վերջին տարիներս բռնել է նաև մի նոր ռազմական ուժ՝ ոդային տորմիդը, նույնպես է քիմիական միջոցները (խեղդող գազեր), փորոնցով կապիտալը պատերազմի ժամանակ պետք է թունալորե թշնամու բանակի զինվորներին: Վերջին տարիներս, արդեն համաշխարհային պատերազմը վերջանալուց հետո, Յեվրոպայում աճում է համաշխարհային պատերազմում տարած հաղթանակների հիման վրա խոշորագույն ռազմական պետություն—Ֆրանսիան, փորտեղ կառավարության զլուխն են անցած ամենաանհաշտ կապիտալիստները, փորոնք որդատորե

նորանոր պատերազմներ են պատրաստում:

Մեր արեմտյան սահմաններում են յերկու պետություն—Լեհաստանը և Ռումինիան, փորոնք Ֆրանսիական իմպերիալիստների հետ կապված են անմիջական ռազմական դաշնադրություն և ամեն բոլե կարող են իբրեւ ռազմական ուժ Մորհրդային հանրապետության դեմ հանվել:

Մենք ամեն կողմից շրջապատված ենք թրշնամիներով, փորոնք չեն հարձակվում մեզ վրա միայն այն պատճառով, փոր մենք ուժեղ ենք, իսկ ուժեղ ենք, փորովհետեւ կազմակերպված է միւս պատրաստ եմք պետություններ ամեն մի հարձակմանը ռազմական դիմադրությամբ պատասխանել: Այստեղից ել հանում ենք անմիջապես այն յեղրակացությունը, փոր խաղաղ ժամանակ ես մեզ մշտական հարկավոր ե զենքի տակ պահել կարմիր Բանակը, փորպետդի ամեն որ և ամեն ժամ պատրաստ լինենք թշնամու հարձակմանը զիմադրել:

Ինքնըստինքյան հասկանալի յե, փոր խաղաղ պայմաններում Մորհրդային հանրապետությունը միշտ պիտի ձգտի, կարելի յեղածին չափ կարմիր Բանակի թվական քանակը կրճատել: Մորհրդային իշխանությունը աշխարհիս բոլոր պետություններից ամենախնայողն է և յերկրի ունեցվածքին չափազանց խնայողորար և վերաբերվում:

Կառավարութիւնն ինքն եւ յելած լինելով բանվոր դասակարգի և գյուղացիութեան շարքերից լավ գիտե, թե վորքան դժվար ե գյուղացու տնտեսութեան համար յերկար ժամանակով Կարմիր Բանակի շարքերն ուղարկել իր վորդուն։ Խորհրդային իշխանութիւնն իր առաջ դրած լինելով գյուղատնտեսութեան և քաղաքային արդյունաբերութեան զարգացման խնդիրն, աշխատում ե յերկրի բոլոր ուժերը ուղղել դեպի այդ նպատակի իրագործումը։

Յեւ ահա ճակատներում ղինված պայքարը դադարելու հենց առաջին որից սկսած, Խորհրդային կառավարութիւնը համարձակ կերպով բռնում ե Կարմիր Բանակի կրճատման ճանապարհը։ Ջենովայի և Հաագայի կոնֆերանսներում, վորոնց մասին վերը խոսք յեղավ, Խորհրդային իշխանութիւնը առաջարկ ե մտցնում բոլոր պետութիւնների ղինված ուժերը կրճատել ընդհանրապես, սակայն այդ առաջարկը մերժվում ե։ Այն ժամանակ Խորհրդային կառավարութիւնը 1922 թվի վերջերին Մոսկովայում հատուկ կոնֆերանս ե հրավիրում հարևան պետութիւնների (Ֆինլանդիա, Եստոնիա, Լատվիա, Լեհաստան) ներկայացուցիչներից և իր հարևաններին առաջարկում ե ռազմական ուժերի փոխադարձ կրճատում։ Բայց այստեղ եւ

Խորհրդային կառավարութիւնը մերժում ե հանդիպում։ Ակներե ե, վոր թե խոշոր կապիտալիստական պետութիւնները, թե մանր, խոշորներից կախումն ունեցող պետութիւնները, չեն կարող սպառազինվելուց հրաժարվել։ Ինչպես յերևում ե նրանք Խորհրդային իշխանութեան դեմ զենք են ճոճում, ուստի պէտք ե զգուշ լինել։

Բայց և այնպես Խորհրդային կառավարութիւնն իր փոխադարձ զինաքափման առաջարկի մերժումից հետո յել շարունակում ե կրճատել իր բանակը։ Այսոր մեզ մոտ մշտական զորամասերում միայն 600,000 մարդ կա զենքի տակ, 1920 թվ. 4 միլիոնի փոխարեն։ Ցարի ժամանակ զենքի տակ մշտապես մեկ միլիոն և յերկու հարյուր հազար մարդ կար, բայց չե վոր ցարի կառավարութիւնը դաշնակից եր Անգլիայի և Ֆրանսիայի նման խոշոր բուրժուական պետութիւնների հետ, և կարող եր միշտ նրանցից ռազմական ոգնութիւն սպասել։ Յեթե մենք նկատի ունենանք յերկրի մեծութիւնը և սահմանների յերկարութիւնը, ապա աժենքն եւ կհամաձայնվեն, վոր մեր Կարմիր Բանակը բավական փոքր ե։

Մենք թշնամիներով շրջապատված ենք։ Վաղ թե ոչ, մեր Խորհրդային հանրապետու-

թյան և ամբողջ աշխարհի ըուրժուական պետությունների միջև զինված պայքարն անխուսափելի յե: Մեր կառավարությունն ամեն միջոց ձեռք է առնում, վոր հետաձգի, վորքան կարելի յե յետ մղի այդ անխուսափելի զինված ընդհարումը: Կապիտալիստների ամբողջ աշխարհը պատրաստվում է նոր պատերազմի: Մենք չպեաք է այդ մտանանք: Խաղաղ ժամանակ կարմիր Բանակը սովորում է ինքն յեվ ուղիղ և անկողն անկողն վարժեցնում ամբողջ ազգաբնակչությանը, վորպեսզի զինված ընդհարման գեպում պատրաստ լինի:

5. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԲԱՆԱԿԸ

Յեթե որինակի համար համեմատելու լինենք իրար հետ Լեհաստանի և մեր Խորհրդային Կարմիր բանակը, ապա մենք կտեսնենք, վոր թե այս և թե այն բանակում և առհասարակ բոլոր բանակներում զինվորների հիմնական մասսան կազմում են բանվորներն ու գյուղացիները: Նույնն էր նաև ցարական բանակում: Ուստի վտանք գուցե հարցնեն թե տարբերությունն ինչ է: Ինչու դուք, բոլշևիկներդ ձեռ Կարմիր Բանակն անվանում եք «բանվորագյուղացիական կարմիր Բանակ»:

Առաջին տարբերությունն այն է, վոր

ցարական և կապիտալիստական բանակներում այդ բանվորներին ու գյուղացիներին հավաքում են բռնի կերպով, վորպեսզի կռվեն և պատերազմեն հարուստների սպան, բանվոր դասակարգին և գյուղացիությանն ի վնաս, վոր այդ բանակները կոչված են բանվորների ու գյուղացիների մեջ ամեն մի անբավականություն ճնշելու: Իսկ մեր Կարմիր Բանակը բանվորներն ու գյուղացիները ստեղծել են իրենց կոշտ ձեռներով կապիտալի յեվ կալվածատերերի դեմ մղած պայքարում՝ բանվորագյուղացիական զործի պաշտպանության համար: Այս մասին վերևը մենք մանրամասն խոսել ենք արդեն:

Այն յերկրներում ուր իշխում է կապիտալ ժողովրդին թշնամի բանակում ծառայելը մի ծանր պարտականություն է, վորից ամեն մի բանվոր ու գյուղացի աշխատում է խուսափել, վորովհետև ում դարդն է կտրվել, վոր իրեն խորթ և թշնամական զործի համար մեռնի: Իսկ մեզանում, Խորհրդային հանրապետության մեջ, ուղիղ և զործի ուսումնասիրությունը, Կարմիր Բանակի շարքերում մնալը վոչ թե ստիպմունք է այլ աշխատանքի պարտական կառուցումն յեվ մի իրավունք, վոր միայն բանվոր դասակարգին և գյուղացուն է վերապահված:

Մենք բոլորս լավ գիտենք (իսկ ով վոր չի

խմանում պետք է մի լավ ուսումնասիրի) մեր սահմանադրությունը, այսինքն, խորհրդային իշխանության հիմնական որենքը: Այդ որենքի հիման վրա յերկիրը կառավարում են խորհուրդները: Բայց միջոցով բանվորն ու գյուղացին: Ահա նաև միայն աշխատավոր մարդն իրավունք ունի ընտրելու յեկ ընտրվելու խորհուրդների մեջ:

Բայց չե՞ վոր մեր յերկրում մենք կարող ենք գտնել նաև վոչ աշխատավոր մարդիկ: Ահա ձեզ գյուղական կուլակը, վորի ձեռքին անագին քանակությամբ հող կա, վորի մոտ աշխատում են մի քանի բաւարակ: Ահա հարուստ անախագործ - գյուղացին, վորի արհեստանոցում վարձով բանում են ոտարները: Ահա սպեկուլյանտ-վաճառականը մեծ գյուղում կամ բաղաճում: Այստեղ մենք տեսնում ենք խոշոր արդյունաբերական արհեստանոցի տիրոջը վարձու բանվորներով: Իսկ այնտեղ փոքրիկ գործարանի վարձակալին կամ նույնիսկ տիրոջը: Խորհրդային իշխանությունը հանդուրժում է նրանց, վորովհետև այդ աշխատանքն էս ոգնում է մեր անտեսության և առևտրի զարգացմանը, իսկ մենք դեռևս չենք կարող մեր բանվորական պետության մեջ մեր ձեռքը վերցնել յերկրի ամբողջ տնտեսությունը: Խորհրդային իշխանությունը թույլ է տալիս նրանց իրենց աշխա-

տանքն անելու, միևնույն ժամանակ հող տանելով, վոր նրանք պահեն բոլոր Խորհրդային որենքները, վորոնք սահմանված են ուրիշի ձեռնարկներում աշխատող բանվորներին պաշտպանելու համար և աշխատավոր գյուղացիությունը պաշտպանելու կուլակի ճորտային գործարքներին:

Բայց համենայն դեպս այս վոչ աշխատավորական խավերը Խորհուրդներին ընտրելու իրավունքից զուրկ են մնում: Չենք բողնում նրանց նայել մեր կարմիր Բանակի շարքերը մտնել:

Կուլակը, սպեկուլյանտը, կապիտալիստը — Խորհրդային իշխանության թշնամիներն են, բանվորա-գյուղացիական պետության թրջնամիներն են:

Կարմիր Բանակը չի կարող նրանց վերցնել իր շարքերը և ռազմական գործը սովորեցնել: չի կարող նրանց վստահանալ Խորհրդային հանրապետության պաշտպանությունը արտաքին թշնամիներին: չի կարող թույլ տալ, վոր ռազմական գործը սովորելով նրանք իրենց հրացանն ուղղեն Խորհրդային իշխանության դեմ: Յարական և բուրժուական բանակներում, վորքան ավելի մարդս հարուստ լինի և ազնիվ ծագման տեր, այնքան ավելի պատիվ և հարգանք է վայելում: Բոլոր իրավունքների և իշ-

խանութան տերը յերկրում նա յե — նա յե նաև
բանակի տերը: Իսկ մեզանում ընդհակառակը,
հարուստները իրավունքից զուրկ են յերկրում,
նրանց չենք թողնում նաև կարմիր Բանակի
շարքերը մանել:

Սակայն անարդարացի վարված կլինեյինք
բանվորների և գյուղացիների նկատմամբ, յեթե
վնչ աշխատավորական խավերը մենք բոլորու-
մից ազատեյինք ռազմական պարտականու-
թյուններից: Մենք նրանցից վերցնում ենք
բավական մեծ տուրքեր, մենք ազդարնակու-
թյան այդ խավը ծառայեցնում ենք նաև կար-
միր Բանակի պետքերին: Նրանց համար մենք
կազմակերպում ենք հատուկ բանվորական խըմ-
բեր, վորոնք պատերազմի սրերին զանազան
աշխատանքներով պետք և սգնեն կարմիր Բա-
նակին: Բայց հրացան չենք տա այդ խավին և
մեր բանվորա-գյուղացիական ընտանիքը չենք
ընդունի:

Ավելի ևս ցայտուն ձևով կարմիր Բանակի
առանձնահատկությունները հանդես են գալիս
նրա հրամանատարական կազմի մեջ: Յարի և
բոլոր յերկրների կապիտալիստների դիտավոր-
հոգան իրենց բանակը կառուցելիս այն ե, վոր
բանակի գլուխը գնեն կալվածքներին կապիտա-
լիստներին:

Յեվ հասկարալի յե թե ինչու բանակում
հավաքելով բանվորների և գյուղացիների ահա-
գին ժառանգները և նրանց պատրաստելով բան-
վորների ու գյուղացիների գեմ հանելու համար,
կապիտալիստը չի կարող բանվորին և գյուղա-
ցուն վստահանալ այդ բանակի ղեկավարու-
թյունն ու հրամանատարությունը: Նա վախե-
նում ե, չլինի թե վտանգի բույնին այդպիսի
հրամանատարն անցնի իր գնդի հետ գործադու-
արած բանվորների կամ ապստամբ գյուղացի-
ների կողմը կամ չլինի թե հրաժարվի իր գունդը
ճակատ տանելուց: Յերկրի տեր ու տիրականն
են հանդիսանում կալվածատերն ու կապիտա-
լիստը, այդ պատճառով հենց նրանց ել հանձ-
նելում ե բանակի հրամանատարությունը:

Յարական բանակի համար հրամանատար-
ներ պատրաստում եյին հատուկ դպրոցներում,
վորոնց մուտքը փակ եր բանվորների և գյու-
ղացիների համար: Այդ դպրոցներն ընդունվում
եյին միայն ազնվականների զավակներն ու հա-
րուստ ծնողների վորդիները: Այդ ապագա հրա-
մանատարներին դաստիարակում եյին արհա-
մարհանք ներշնչելով նրանց ղեկի աշխատավոր
ժողովուրդը, սովորեցնում եյին նրանց զինվոր-
ներին տավարի տեղ գնել, հրանոթի միս հաշ-
վել: Նույն սխտեմն եր թագավորում նաև ու-

սուցման և դաստիարակման ամբողջ գործի մեջ: Յարի ժամանակ ժողովրդից դուրս յեկած մարդուն դժվար եր բարձր դպրոց ընկնելը: Յարական միևնույն Դեյանովը հենց այդպես ել հրամայել եր «Կուխարկաների (խոհարարուհիների) յերեխաներին գիմնագիտական ու համալսարանները չընդունեք»: Ի հարկե, պարզ ե, վոր այդ «Կուխարկաների յերեխաներին» ուղղակիան դպրոց չեյին ընդունում ու չեյին ընդունում:

Այս կողմից ուրիշ սխառեմ, ուրիշ կարգեր են սահմանված մեր Խորհրդային հանրապետութեան մեջ: Լենինը մեր հեղափոխութեան առաջին որերն արդեն հայտարարում ե «ամեն մի խոհարարուհի պետք ե կարողանա պետութեան կառավարել»: Ինչպես տեսնում ե ընթերցողը, այստեղ ցարական միևնույն Դեյանովի առաջին բոլորովին հակառակն ե ասված:

Յեւ այս կարգն անց ե կացվում մեզանում մեր շինարարութեան բոլոր ճյուղերում: Խորհրդային իշխանութեանը վորտեղ ել նայելու լինես, թե դպրոցների համար ուսուցիչներ ընտրելիս, թե Խորհրդային դործարանի կառավարիչ փնտռելիս, թե յերիտասարդներին համալսարան հավաքելիս, բժիշկներ, ինժեներներ, պրոֆեսորներ պատրաստելու համար, ամեն տեղ

աշխատում ե բանվորներից և գյուղացիներից ընտրել: Ինքնըստինքյան հասկանալի յե արդեն, վոր Խորհրդային իշխանութեանն առավել ևս մեծ ջանք պիտի թափի Կարմիր Բանակի համար հրամանատարական կազմ ընտրելին, վորովհետեւ Կարմիր Բանակն ե վոր, պաշտպանում ե Խորհրդային իշխանութեան գոյութեանն արդեն:

Կարմիր Բանակի շինարարութեան արդեն առաջին տարին, Խորհրդային իշխանութեանը կազմակերպում ե հատուկ դպրոցներ և դասընթացներ ապագա հրամանատարներ պատրաստելու համար: Այդ դպրոցների և դասընթացների դուռը բոլորովին փակ ե վոչ աշխատավորական տարրերի համար և այդտեղ ընդունվում են միայն բանվորական և գյուղացիական ծագումն ունեցող անձինք: Նույն բանն ե անում Խորհրդային հանրապետութեանը, յերբ նույնիսկ իր բարձրագույն ուղղակի-վարժական դպրոցները — ակադեմիաներն ե կառուցում, վորտեղից դուրս են գալիս բանակի աւագ և բարձր հրամանատարութեանը: Խորհրդային հանրապետութեանն իր այս համառ աշխատանքով և մշտական ներքին կարմիր-բանակայինների շարքերից հրամանատարներ դուրս բերելով, այն հետևանքին ե հասել, վոր արդեն այժմ ել

Կարմիր Բանակի հրամանատարութեան մեծ խա-
սըն աշխատավոր ժողովրդի վտակներից և արյունից
և: Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր Կար-
միր Բանակի համար հարյուրավոր և հազարա-
վոր հրամանատարներ պատրաստելն այնքան էլ
հեշտ բան չէ և միանգամից, թեկուզ մի քա-
նի տարվա մեջ, այդ բանն անել անկարելի չէ:
Այն ինչ ուղղման գործը հապաղում չի սի-
րում և առանց լավ պատրաստված հրամանա-
տարները Կարմիր Բանակը մնալ չի կարող: Այս
պատճառով Սորհրդային իշխանութիւնը քա-
ղաքացիական կռիւների ժամանակ ստիպված
էր Կարմիր Բանակի շարքերն ընդունել հազա-
րավոր հրամանատարներ, վորոնք ծառայել է-
ին հին ցարական բանակում և չորս տարվա
համաշխարհային պատերազմի ընթացքում ձեռք
բերված ուղղման գործի մեծ փորձառու-
թիւնն ունեւէին:

Կարմիր Բանակի շարքերում այդ ուղանե-
րից շատերն արդեն հրաժարվել են իրենց հին
սովորութիւններից, ընտելացել են Կարմիր
Բանակի կենցաղին և ահագին սգուա են բերել
Կարմիր Բանակի շինարարութեան գործում:

Այստեղ ևս Սորհրդային իշխանութիւնը
հաջողութեւն և ունենում շնորհիվ ամբողջ Կար-
միր Բանակի ընդհանուր բնույթի, շնորհիվ այդ

Բանակի ամբողջ կյանքը թափանցող բանվորա-
կուղացիական վոզու: Խստութիւնն ու կար-
գապահութիւնը Կարմիր Բանակում պահվում է
հիշա, ինչպես և ուրիշ բանակներում, վորով-
հետև առանց կարգապահութեան չի կարող լի-
նել և վնչ մի կազմակերպութիւն, մանավանդ
ուղղման: Բայց դա ցարական զորանոցի
կարգապահութիւնը չէ, վոչ հիմնված էր սպայի
դեպի զինվորն ունեցած արհամարհանքի, ուխ-
մընելը ջարդելու վրա, ուր զինվորը կատարե-
լապես իրավագուրկ էր և հին սպան կատարե-
լապես անպատիժ: Կարմիր Բանակի զինվորը—
Սորհրդային հանրապետութեան իրավագործ քա-
ղաքացին է: Նա բանվորա-կուղացիական այն
ընտանիքի զավակն է, վոր կառավարում և
աշխարհիս միակ Սորհրդային հանրապետութիւ-
նը:

Նլ ինչ տեսլ կուզի, վոր այդպիսի բանակում
անհնար է հին կարգերի վերագարծը:

Ցարական կառավարութիւնը և բոլոր յեր-
կրները կապիտալիստները միշտ աշխատել են ի-
րենց բանակը ժողովրդից, վորքան կարելի չէ,
հեռու պահել: Հալաքում էին յերիտասարդու-
թեանը վշուղից ու գործարաններից և յերեք
տարի փակում էին զորանոցում հարբած
սպաների հրամանատարութեան տակ և արգե-

լուծման ելքին վերեն հարաբերություն ունենալու
բանվորական կամ գյուղացիական կազմակեր-
պությունների հետ ծարր սաստիկ վախենում
են, չլինի թե գիտակից բանվորները մի վոր-
յեվն արդարացի խոսք մտնի գործանոց:

Յեվ մինչև այժմ ել բոլոր յերկրներում
աշխատում են իրենց զինվորներին ամեն տե-
սակի քաղաքականությունից հեռու պահել, վա-
խենալով չլինի թե զբանից մի բան դուրս գա-
նայե վախն ել լիովին իրավացի չե, վորովհետև
բանվորների և գյուղացիների հետ սերտ հարա-
բերություն մեջ գտնվելով, զինվորը հետո ել
չի կրակի այդ բանվորների և գյուղացիների
վրա:

Բոլորովին ուրիշ կերպ է դրված գործը
մեր կարմիր Բանակում: Մեր կարմիր զինվորը
Խորհրդային հանրապետության իրավագործ քա-
ղաքացին է: Կարմիր Բանակը մասնակցում է
Խորհուրդների ընտրություն, ուղարկում է պատ-
գամավորներ Խորհուրդներին համագործակա-
նայալիսով մասնակցում է բանվորական, գյու-
ղացիական և կարմիր բանակային պատգամա-
վորական Խորհուրդների կենտրոնական Գործա-
դիր կոմիտեյի ընտրություն — այդ մասին վկա-
յում է նաև կենտրոնական Գործադիր կոմիտե-
յի անունն իսկ:

Ինքնուրույն արդեն հասկանալի չե,
վոր յեթե կարմիր բանակային Խորհրդային
հանրապետության քաղաքացի չե, ապա նա
անարգել և ազատ կարող է գրքերի և լրագրե-
րի ընթերցանություն ձեռնամուխ լինել, վոր
այնքան արգելված է ուրիշ բանակներում:

Ցարական բանակում զինվորները ամեն մի
հանցանքի համար հատուկ ուղղման դատա-
րանի ելին հանձնվում: Ամեն մի, յերբեմն դա-
տարի հանցագործության համար, վոր ուղղմա-
կան գործի հետ վոչ մի առնչություն չունեն,
սոսկական զինվորն ընկնում եր հատուկ կալա-
նավորական վաշտերը կամ տաժանակիր աշխա-
տանքի եր պատապարտվում ուղղման դատա-
րանի ազնվական սպաների դատավճռի հիման
վրա: Խորհրդային հանրապետության մեջ կարմիր
բանակային սովորաբար հանցանքների համար
դատվում է Խորհուրդների ստեղծած ընդհանուր
պատարանով: Միայն ուղղմական հանցագործու-
թյունների համար նա դատվում է հատուկ ուղ-
մական տրիբունալում, սակայն այսուեղևս
խստիվ պահպանվում է հավասարություն հրա-
մանատարի և կարմիր բանակայինի միջև: Որի-
նակ, կարմիր բանակայինը հրամանատարին վի-
րավորելու համար և ընդհանրապես հրամանա-
տարը կարմիր բանակայինին վիրավորելու հա-

մար մեղավորները հավասարապես պատժվու-
նեն:

6. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱ- ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Վերադասված թշնամու հարձակման դեպքում միշտ պատրաստ լինենք, վերադասված հարկավոր քաղաքին կարողանանք թշնամու դեմ հանել հար-
կավոր թվով սովորեցրած և զինված մարդիկ, վերադասված սահմանները կարողանանք առաջին հարձակումից պաշտպանել և այդպիսով հնարա-
վորություն տված լինենք ճակատ հավաքել բո-
լոր զինված ուժերը, Խորհրդային կառավարու-
թյանը տնտեսական և՝

1) Ձենքի տակ ունենալ, թեկուզ փոքրա-
թիվ, մշտական բանակ և ծովային նավատորմ:

2) Մարդ չաշխատավոր ազգաբնակչությու-
նը սովորեցնել ռազմական գործին, և

3) Ազգաբնակչության այս ուսուցումը ռազմական գործին՝ այնպես կազմակերպել, փոր ածեն մի քանի արագ կարելի լինի հավա-
քել նրանց հանրապետությունը պաշտպանելու համար:

Յարտական կառավարությունը, փոր չեր խնայում լանվորների և դյուղացիների տնտե-
սական կարիքները, այդ պահանջներին բավա-

րարում եր յուրահատուկ ձևով, նա մշտական զենքի տակ եր պահում մեկ միլիոն և յերկու հարյուր հազար զինվոր, և բոլորին պահում եր յերեքական տարի գորանոցներում: Խորհրդային իշխանությունը այդպես վարվել չեր կարող: Հաղթությունից անմիջապես հետո սկսելով նոր բանակի կազմակերպությունը, Խորհրդային իշ-
խանությունը գործը բոլորովին ուրիշ հիմքերի վրա յե դնում: Այդ նոր հիմունքները միանգա-
մից չեն կազմվում— մեր զինված ուժերի կազ-
մակերպության մեջ դեռ փոփոխություններ ել կլինեն: Մակայն այդ կազմակերպության հիմ-
նական ելույթունն այս ե:

Ռազմական գործի ուսուցումը սկսվում ե դեռ աշակերտական նստարանից, I և II-րդ առ-
տիճանի բոլոր դպրոցներում՝ մարմնամարզական վարժություններից: Սմբապնդել մարմինը, շար-
ժուն և ճարպիկ դարձնել այն, աչքի սրատեսու-
թյուն ձեռք բերել և նոր պայմաններին արա-
դորեն հարմարվել և ընդունակություն ու աշխըր-
շություն հասնել, կարելի յե մարմնամարզու-
թյան և սպորտի միջոցով: Խորհրդային իշխա-
նությունը ամեն կերպ աջակցում ե այդորինակ զբաղմունքներին, թե դպրոցում և թե նրանից դուրս:

Բակական ռազմական ուսուցման առաջին

գործարանային լավ վարձատրվող բանվորները հետ: Այդ տեսակետից դեռ այժմս ել շատ պակասություններ կան: Կարմիր հրամանատարների դրությունը դեռ շատ հեռու յե ցարական բանակի հին սպաների նյութական գրությունից: Բայց մենք զիտենք, վոր դեռ ամբողջ յերկրում զգացվում ե նյութական միջոցների պակաս, վոր մենք թեև դանդաղ, բայց անընդհատ բարձրանում ենք բնակչության նյութական գրությունը լավացնելու գործում:

Հատուկ դրության մեջ են գտնվում նաև բոլոր ռազմական գաղութները կուրսսանտները: Նրանք ընդունվում են իրենց հոժար կամքով կարմիր բանակայինների և նույնիսկ քաղաքացիական ազգաբնակչության շարքերից, պրոֆեսիոնալ մարմինների և կուսակցական կազմակերպությունների հանձնարարականով: Այդ գաղութներում ուսուցման տեղությունը զանազան ե՝ հրամանատարական դասընթացներում—1 տարի, նորմալ գաղութներում—3 տ. նույն 3 տարի ժամանակն ե նաև տիպիկալում, սակայն այստեղ ընդունվում են արդեն պատրաստի՝ հրամանատարներ:

Ռազմական գաղութի ամեն մի կուրսանա դըպրոցն ավարտելուց հետո պարտավոր ե ծառայել Կարմիր Բանակում վորոշ ժամանակ, գաղութում

նովորած յուրաքանչյուր տարվա համար:

Ինչ վերաբերում ե կարմիր-բանակային մարտիկներին, նրանց ծառայության ժամանակամիջոցներն ել զանազան են:

Հետևակ գործառնելում	1 տարի	և	6 ամիս,
Հեծելակ	»	»	2 » 6 »
Ողային տորմիզում	3	»	» 6 »
Ծովային	»	»	4 » 6 »

Յեվ վորովհետև կարմիր բանակայինների մեծագույն մասը հավաքվում ե հետևակ գործառնելում, ուստի կարմիր բանակային մարտիկների հիմնական մասսան Կարմիր Բանակի մշտական գործառնելում ռազմական ուսուցումն անցնում ե տարի ու կեսում:

Կարմիր Բանակի և նախատորմի մշտական գործառնելում ծառայությունը վերջացնելուց հետո՝ կարմիր բանակայինները առնակվում են պահեստի մեջ, ուր մնում են մինչև 40 տարեկան հասակը (ցարական ռեժիմի ժամանակ պահեստում մնում էին մինչև 45 տարեկան հասակը): Այդ ժամանակի ընթացքում պահեստի զինվորները ամեն մի չորս տարին մի անգամ պիտի հավաքվեն Կարմիր Բանակի գործառնելին կից կրկնողական ուսուցման: Այդ անհրաժեշտ ե կարմիր բանակայինների գործառնելում ձեռք բերած գիտելիքները թարմացնելու և նոր

գիտելիքներով լրացնելու համար, վորովհետև
նամական գործը մի տեղում կանգնած չի, այլ
մշտապես զարգանում է:

7. ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ

Մշտական զորամասերում միայն 600,000
կամ իր բանակային ե հավաքված: Այս հանգա-
մանը բազմաթիվ բանվորների և գյուղացիների
մի բանի տարով գյուղերից և զործարաններից
կտրում է, վորով վորոշ չափով կասեցնում
է գյուղատնտեսության և բաղաքային արդյու-
նաբերության վերականգնումը:

Այնուհետև մի քանի տարի նույնիսկ այդ-
չափ կարմիր բանակայիններ պահելը պետու-
թյունից պահանջում է մեծ ծախսեր, վոր ծած-
կելու համար պետք է լինում տուրքեր հավա-
քել: Ուստի Սորհրդային կառավարությունը
ձեռնարկել է ռազմական գործի վերակազմու-
թյան, վորի ելությունը հետևյալն է.

Վորևե շրջանի (նահանգի, գավառի, գավա-
ռակի) չորս տարիք ունեցող (21-ից մինչև 34
տարեկան) բոլոր գյուղացիներն ու բանվորները
չորս տարով նշանակվում են վորևե յեկրային
գիվիզիայի, գնդի, վաշտի կարմիր բանակային-
ների: Նրանցից ամեն մեկը ստանում է կար-

միր բանակայինի գրքույկ, ճանաչում է իր ան-
միջական հրամանատարին, պարտավոր է կանչ-
վելուն պես ներկայանալ իր զորամասը, վոր
այնքան էլ նեղու չէ իր տնից, մոտավորապես
25—40 վերստ:

4 տարով յերկրային գիվիզիայի մեջ նշա-
նակված կարմիր բանակայինը անցնում է իր զո-
րամասում ռազմական գործը միայն ուր ամ-
սրվա ընթացքում կարճատև ժամանակամիջոցնե-
րով, իսկ մնացած ժամանակն ապրում է իր տա-
նը, իր ամբողջ ժամանակը նվիրելով իր տնո-
սության հոգսերին և պետությունից վոշ մի
ծախս չպահանջելով: Նախակոչյան պատրաս-
տության վերջին տարում արդեն յերիտասար-
դությունը նշանակվում է այդ տեսակ յերկ-
րային գիվիզիաների շարքը և ամբողջ յերեք ա-
միս սովորում է, ստուգելով նախակոչյան պատ-
րաստությունը նախկին յերեք տարում անցա-
ծը և ձեռք է բերում այդպիսով ռազմական
ուսուցման հիմունքները:

Հետագայում ամեն տարի պահպան ժամ-
կետով ելի հավաքվում են, նախած գյուղատն-
տեսական պարապմունքների բնույթին, ընդհա-
նուր առմամբ և՛ 5 ամսով: Ռազմական ուսուց-
ման այդ ձևով անցնելու առավելությունները
յերկրի տնտեսության համար ակներև են: Իսկ

Կարմիր Բանակն ել ձեռք ե բերում նվազագույն ծախսերով պատրաստի և կազմակերպված ձևով մի ղեկիցիա, մոտակայքում, իրենց տներն ապրող կարմիր բանակայիններից կազմված. Խորհրդային հանրապետություն վրա անակնկալ հարձակում լինելու դեպքում լավ սովորեցրած և իր ռազմական ղեկավարները մշտապես նորոգած այդ ղեկիցիան կարելի կլինի հավաքել առանձին զնդերով մեկ-յերկու ուղում:

Գլխիցիաների կազմակերպման այս նոր ձևը և ազդաբնակություն ռազմական գործը սովորեցնելու այս նոր միջոցը կարմիր Բանակն առաջին անգամ փորձում է 1923 թվ. սեպտեմբեր—դեկտեմբեր ամիսներին: Գործի նորություն պատճառով այդ ղեկիցիաներն են ընդունվում միայն թե նախադրյալն յերիտասարդությունը, այլ այն չորս տարիքը (1898-1901 թվ. ծնվածները). վերոնք կարմիր Բանակի շարքերում ռազմական ուսումնա արդեն սնցել են:

Փորձը լավ հետևանքներ տվեց: Խորհրդային, պրոֆեսիոնալ և կուսակցական կազմակերպությունների աջակցությամբ շնորհիվ, թե կարմիր բանակայինների ցուցակապրումը և թե հենց 2-3 շաբաթվա ուսուցումն անցնելու հավաքուրդները աջող անցան և մի անգամ ևս ցույց տվին, թե ինչ սերտ կապ է հաստատվել

կարմիր Բանակի և ամբողջ Խորհրդային բանվորա-գյուղացիական յերկրի միջև: Նոր ղեկիցիաները ամուր կապվել են իրենց շրջանների հետ, վերադարձից հավաքվում են ղեկիցիայի կարմիր բանակայինները և նրանց համար արդեն դժվար չի լինի կրկին անգամ հավաքվել իրենց զորամասերը, ուսուցումը կրկնելու համար:

Կանցնի առաջին տարին և այդ ղեկիցիան ընդունված չորս տարիքներից է ամենամեծը, այսինքն 1898 թվին ծնվածներն, ղեկիցիայի կարճակվեն պահեստ, իսկ նրանց տեղը ղեկիցիայի ընդունվեն 1902 թվին ծնված յերիտասարդները (նախադրյալները), վերոնք ղեկիցիայի շրջանում են ապրում, իսկ ուրիշ շրջաններում ապրող նույն տարիքի յերիտասարդները կմտնեն լրացնելու կարմիր Բանակի շարքերը պահեստ արձակվածների փոխարեն:

8. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Մենք վերեն արդեն խոսել ենք այն ըսվող-բուհների հիմնական հատկանիշների մասին, վերոնց վրա կառուցված է կարմիր Բանակը: Կարմիր Բանակը մեր Հոկտեմբերյան հեղափոխությունն անվաճումների պաշտպանն է թշնամիների հարձակումից:

Նա կառուցված ե դասակարգային սկզբունքով և կազմակերպում ե միայն բանվորական և գյուղացիական մասսաները թշնամուն դիմադրելու համար: Իր այս կոչումն իրականացնելու համար կարմիր Բանակը վոչ միայն պետք ե ռազմական գործը լավ իմանա, այլև պետք ե վերին աստիճանի գիտակից լինի իր նպատակների և խնդիրների ըմբռնման մեջ:

Կալվածատերերի և կապիտալիստների լծի դեմ մղած պայքարում Ռուսաստանի բանվոր դասակարգն ու գյուղացիութունն իրենց ծոցից առաջ են բերում ամենագիտակից և ամրակուռ առաջադահ — Ռուսաստանի կոմունիստական կուսակցութունը (բոլշևիկները): Խորհուրդների ընտրության ժամանակ բանվորներն ու գյուղացիները Խորհրդային իշխանության գոյության բոլոր վեց տարիների ընթացքում մշտապես վստահութուն են ցույց տվել այդ միակ կուսակցությանը, վորն այդ վստահության վրա հիմնված կազմակերպում ե Խորհրդային հանրապետության ամբողջ կառավարութունը: Այդ վստահութունը հիմնված ե այն մեծ պայքարի դասերի վրա, վոր ամբողջ ժամանակ արդեն հեղափոխության առաջին օրերից մղում եյին Ռուսաստանի բանվորական և գյուղացիական մասսաները: Բոլշևիկների կուսակցութունը

սովորեցրեց բանվորներին հին իշխանության տապալումը, բոլշևիկների կուսակցութունը ղեկավարում ե ամբողջ ռազմական պայքարը, բոլշևիկների կուսակցութունը սովորեցրեց, թե ինչպես պետք ե կազմակերպել նոր հիմունքների վրա ահադին յերկրի կառավարութունն ու տնտեսությունը:

Կարմիր Բանակը հեղափոխության ընթացքում կազմակերպվում ե նույն Ռուսաստանի կոմունիստական կուսակցության (բոլշևիկների) ղեկավարության տակ: Ծանր բողոքներին կուսակցութունը դեպի ճակատն ե շարառում իր հազարավոր լավագույն անդամներին: Կարմիր Բանակի շարքերում կոմունիստները հանդիսանում են միշտ այն կորիզը, վորի շուրջն ե համախմբվում ամբողջ զորամասը: Յեվ այդպես ել մնացել ե մինչև հիմա: Ամեն մի զորամասում մենք ունենք կոմունիստական բջիջ, վոր իր շուրջն ե հավաքում ամբողջ անկուսակցական մասսան, ոգնելով հրամանատարներին և կոմիտարներին կարմիր բանակայինների ռազմական և քաղաքական ուսուցման գործում:

Մենք վերևում արդեն հիշել ենք Կարմիր Բանակի կոմիտարներին մասին: Կոմիտարն այն պաշտոնական անձնավորութունն ե, վոր դրված ե Խորհրդային կառավարության կողմից

Կարմիր Բանակում խորհրդային որենքների ճիշտ կատարման վրա հսկելու համար: Զորամասի ղեկավարութունը կազմակերպված է միատեղ հրամանատարի և կոմիտարի կողմից, Վորոնք միասին ել ստորագրում են բոլոր կարգադրությունները: Ռազմական ուսուցման գործը կազմակերպում է զորամասի հրամանատարը և նրա կարգադրությունները շարային գծի վերաբերյալ՝ բոլորը սկսած է անպայման կատարեն: Զորամասի կոմիտարը մի կողմից իրականացնում է զորամասի ամբողջ շարային և տնտեսական մասի վերահսկողությունը, իսկ մյուս կողմից ղեկավարում է ամբողջ քաղաքական աշխատանքը:

Քաղաքական աշխատանքի լայն զարգացումը բնորոշ է հատկապես հենց Կարմիր Բանակի համար և կապված է Կարմիր Բանակի կառուցվածքի բոլոր առանձնահատկությունների, նպատակների և կոչման հետ: Այստեղ մենք տեսնում ենք ցարական և ստաբիլիթյա բանակների կատարյալ հակադրությունը:

Այնտեղ միշտ ձգտել են և այժմ ել ձգտում են ընկճել, թմբեցնել մարտիկի միտքը: Սրանց հարկավոր է անխոս զինվոր, վոր չմտածի և չտեսնի ամբողջ յերկրում իր շուրջը կատարվող անարդարությունների մասին: Այնտեղ ձգտում

են անզուեղ փորել յերկրի բանվորների և գյուղացիների և բանակի զինվորների միջև: Կարմիր Բանակը ուժեղ է իր գիտակցությամբ յեվ յերկրի հետ ունեցած կապերով: Ահա այս գիտակցությունը ավելի ևս բարձրացնելու նպատակով հենց կազմակերպված է ամբողջ քաղաքական աշխատանքը զորամասերում:

Զորամաս նոր մտած կարմիր բանակային նկատմամբ առաջին խնդիրն է նրան գեղ-կարդալ սովորեցնելը վարպետի նա կարողանա լըրագիր և գիրք կարդալ, վարպետի նա կարողանա գիտակցաբար մասնակցել ժողովներին և լսել իր քաղաքական ղեկավարի (քաղղեկի) բացատրությունները: Առաջին ամիսները բոլոր կարմիր բանակայիններն անցնում են զրագիտության դպրոցը, ուր հրանց սովորեցնում են գրել կարդալ, իրավաբանություն, աշխարհագրության և բնագիտության տարբերքը: Անգրագիտության լիկվիդացիայի գործը Կարմիր Բանակում շատ լայն է զրված:

Կարմիր Բանակից սկսեսու արձակված զինվորները վերադառնում են գյուղ բոլորը զրագետ և գյուղում ծառայում են զրագիտության և լուսավորության գործի հետագա տարածմանը:

Ամեն որ վաշտի քաղղեկը (կոմունիստ) մի

ամբողջ ժամ կարմիր բանակայինների հետ
զրուցում և նրանց հետաքրքրող հարցերի շուրջը՝
Այստեղ կարմիր բանակայիններին բացատրում
են կարմիր Բանակի կառուցման հիմունքները
և նրա պայքարի պատմությունը, խորհրդային
հանրապետություն հիմնական որենքը (սահմա-
նադրությունը), խորհրդային իշխանություն
քաղաքականությունը, յերկրագործություն, ար-
դյունաբերություն, տուրքերի վերաբերյալ։ Ա-
զատ ժամանակն էլ կարմիր բանակայինն անց
ե կացնում զորամասի ակումբում, կամ վաշտե-
րին կից կազմակերպված «Լենինյան անկյուն-
ներում»։

Այստեղ մենք տեսնում ենք խաղեր, սե-
փական թատրոն, վորի բեմի վրա խաղում են
հենց իրենք կարմիր բանակայինները, սեփական
կինո, նվագախումբ։ Այստեղ կա նմանապես
զրադարան-ընթերցարան, ուր կան լրագրներ
և զրքեր։

Ավելի լայն քաղաքական աշխատանք և
տարվում ռազմական դպրոցներում, ուր կուր-
սանտները սովորում են Զորդ աստիճանի դրպ-
րոցների ծրագրով։

Այստեղ ակումբն ու զրադարանն ավելի
ևս հարուստ են և գալրոցում յերեք տարի շրվ-
վելուց հետո կուրգանսը դուրս է գալիս վոչ

միայն ռազմական գործին ծանոթ, այլև իբրև
կատարելագետ գիտակից մի քաղաքացի, վոր
կարող է կարմիր բանակայինին ոգնել նրան հե-
տաքրքրող հարցերն ըմբռնելու (լուծելու) մեջ։

Խուլ գյուղերից գալով զորամաս և ախտեղ
տարի ու կես անց կացնելով, կարմիր բանակա-
յինի գիտակցությունն ու զարգացումը գգալի
կերպով աճում է։ Նա արդեն ուսումնասիրել
է խորհրդային իշխանություն նպատակներն ու
ձգտումները, նա ճանաչում է հարևան թշնամի-
ներին, վորոնք շրջապատում են խորհրդային
հանրապետությունը, քաղղեկի, կոմիսարի և իր
կոմունիստ ընկերների հետ շարունակ շփվելով
նա կարողանում է լավ ծանոթանալ բոլշևիկ-
ների կուսակցության նպատակների և ձգտում-
ների հետ։ Ուստի և զարմանալի վոչինչ չկա,
վոր կարմիր Բանակում անց կացրած առաջին
տարվա վերջում կարմիր բանակայինը ցանկու-
թյուն է հայտնում մտնել Կոմունիստական կու-
սակցության մեջ և մտնում է նրա շարքերը։

Կոմունիստական կուսակցությունը ղեկա-
վարում է ամբողջ կարմիր Բանակի լուսավո-
րություն գործը։

Յերկրում և կարմիր Բանակում մեր կու-
սակցությունը աշխատավոր մասսաներին ճա-
նապարհ է ցույց տալիս։ Ամեն մի զորամա-

սում, ամեն մի ռազմական դպրոցում կա բոլ-
շեմիկ կոմունիստների ամբողջում կուսակցական
կազմակերպություն, վորի մեջ մանուկ են թե
կոմիսարները, թե կոմունիստ—հրամանատար-
ները և թե սոսկ կարմիր բանակայինները և,
վորոնք կազմում են բանակի գերակից մասը:
Ռուսաստանի կոմունիստական յերիտասարդա-
կան միության անդամները նույնպես մանուկ
են կոմունիստական բջիջների շարքերը, իբրև
կրտսեր անդամ-թեկնածուներ և ապա վորոշ
ժամանակ անցնելուց հետո դառնում են կու-
սակցության անդամ ընդհանուր հիմունքներով:
Ռազմական դպրոցներում, ուր Ռուսաստանի
կոմյերիտմիության անդամների թիվը խիստ
շատ ե, կազմակերպված են կոմյերիտմիության
առանձին բջիջներ, վորոնք կոմունիստական
կուսակցության բջիջների նման աշակցում են
ամբողջ քաղցուսավորչական աշխատանքի աշո-
ղությանը, բացառելով յերիտասարդ կուր-
սանտներին խորհրդային իշխանության նպա-
տակներն ու ձգտումները և կարմիր Բանակի
դերը թշնամիներից մեր ազատության և ան-
կախության պաշտպանության մեջ:

9 ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերևը մենք մի քանի անգամ հիշեցինք

այն հատուկ դպրոցների մասին, վոր խորհրդա-
յին իշխանությունը կազմակերպել ե կարմիր
Բանակի համար նույն բանվորա-գյուղացիական
հրամանատարական կազմ պատրաստելու համար:
Սկզբում այդ դպրոցները շատավով եյին կա-
ռուցվում, ուսուցման ժամանակամիջոցները
շատ կարճ եյին և ճիշտ մշակված ծրագրեր
չկային: Ուստի այդ դպրոցներն ավարտողները
իրենց ձեռք բերած ռազմական գիտելիքներով,
ինարկե, չեյին կարող հավասարվել հին հրամա-
նատարներին, վորոնք տարիներով սովորել եյին
և այն ել հաստատուն և վորոշ ծրագիրներով:

Այժմ մեր ռազմական դպրոցների կազմա-
կերպման մեջ, ինչպես և բոլոր դործերում,
հաստատուն և վորոշ կարգ ու կանոն ե սահ-
մանված: Այժմ մենք ունենք այդ տեսակ դա-
նազան տիպի ռազմական դպրոցների մի ըն-
դարձակ ցանց:

1. Կարճատև հրամանատարական դասըն-
թացներ ուսուցման մեկ տարվա դասընթա-
ցով:

2. Նորմալ դպրոցներ ուսուցման յերեք
տարվա դասընթացով:

3. Հրամանատարական կազմի բարձրագույն
դպրոցներ մի տարվա դասընթացով գնդի հրա-
մանատարների կրկնողական ուսուցման համար:

4. Ռազմական ակադեմիաներ:

Հիշված դպրոցները կազմակերպվում են սովորաբար զորքի մի վորևե տեսակի համար: Այսպես կան հետևակի դպրոցներ, հեծելազորի դպրոցներ, բարձրագույն հրաձգային դպրոց, կապի բարձրագույն դպրոց և այլն: Սակայն կազմվում են նաև զորքի բոլոր տեսակների միացյալ դպրոցներ, ինչպես որինակ. Կենտրոնական միացյալ դպրոցը Մոսկվայում և մեր Միացյալ Հայկական դպրոցը Յերևանում, վորոնք իրենց կազմի մեջ ունեն հետևազոր, հեծելազոր և հրետանի:

Բացի հիշյալ ռազմական դպրոցներից, վորոնք պատրաստում են հրամանատարներ, կարմիր Բանակում կազմված են հատուկ ռազմա-քաղաքական դպրոցներ, քաղաքական աշխատավոր-կոմիսարներ և քաղղեկներ պատրաստելու համար: Այդ ռազմա-քաղաքական դպրոցներն ունեն մի տարվա դասընթաց: Ուսուցման ծրագիրը նույնն է, ինչ վոր քաղաքացիական խորհրդային կուսակցական դպրոցներում, ավելացրած միայն ռազմական առարկաները: Լենինգրադում կա նաև բարձրագույն ռազմա-քաղաքական դպրոց յերկամյա դասընթացով ընկ. Տոլմաչովի անվան:

Հրամանատարական դասընթացները և նոր-

մալ դպրոցներն ընդունվում են իբրև կուրսանտներ կարմիր բանակայիններից, ինչպես և պրոֆեսիոնալ բանվորական միությունների և կուսակցական խորհրդային կազմակերպությունների հանձնարարականով բոլոր ցանկացողները: խորհրդային իշխանությունը ձգտում է այդ դպրոցներն ընդունել բանվորա-գյուղացիական յերիտասարդության լավագույն մասը, վոր պատրաստ է խորհրդային իշխանության պաշտպանը հանդիսանալ: Չէ վոր այստեղ պատրաստվում են հրամանատարներ, վորոնք պիտի սովորեցնեն կարմիր բանակայիններին, թե ինչպես պետք է զենքը ձեռքին պաշտպանել խորհրդային հանրապետությունը թշնամիներից: Ռազմական դպրոցների կուրսանտները պետք է ամենատոկուն մարզիկը լինեն ուժեղ իշխանական Բանակի անձնական կազմի մեջ: Այդ է պատճառը, վոր ամենից առաջ դպրոց մտնում են կոմունիստներն ու կոմյերիտմիության անդամները: Նրանք կուրսանտների ընդհանուր թվի մեջ կազմում են 60-70 տոկոս: Մնացածներն անկուսակցական են, բայց նույնպես խորհրդային իշխանությանը նվիրված բանվորներ ու գյուղացիներ:

խորհրդային ռազմական դպրոցներն քաղաքացիական պատերազմի վեց տարվա ընթացք

բում շատ բան են արել բոլոր ճակատներում մղված պայքարի և կարմիր բանակայիններին սովորեցնելու գործում: Ամեն տեղ, ուր լուրջ փոփոխություններ տեղի ունեցան, խորհրդային իշխանությունն ուղղակիորեն եր գլխաված կուսակցություններին, վորոնք իրենց արիությունը և հերոսությունը վարակում եյին կարմիր բանակային մասնա-
ներին և բազմաթիվ անդամներ վճռական հար-
ված եյին հասցնում սպիտակ — գվարդիական բանակներին:

Ստորին տիպի ռազմական դպրոցները մշտ-
նելու համար առանձին դիտելիքներ չեն պա-
հանջվում, բացի ազատ զրեւ և կարգապահ (հա-
սակը 17—28 տարեկան): Ռազմական դպրո-
ցում կուսակցական սովորում և վոչ միայն ռազ-
մական գործը: Այստեղ անց են կեցում մեր
քաղաքացիական աշխատանքային 2-րդ առախ-
ճանի դպրոցների բոլոր հանրակրթական առար-
կաները — ուսման, մատնամատիկա, աշխարհա-
գրություն, պատմություն, բնագիտություն,
քաղաքագիտություն, այնպես վոր դպրոցը վեր-
ջացնելիս նախկին սանը դուրս և գալիս իբրեւ
դարգացած և գիտուն հրամանատար, վոր կա-
րող և քիչ գիտակից կարմիր բանակայինին
բացատրել վոչ միայն ռազմական գործը, այլև
բոլոր այն հարցերը, վոր ծագում են նրա ա-

ռաջ աշխատավոր մարդու կյանքից:

Ռազմական դպրոցների կուսակցությունների
համար ռազմական դպրոցում սովորելը լիովին
փոխարինում և կարմիր բանակի դրամատի-
կական ծառայելը: խորհրդային հանրապետություն
յուրաքանչյուր քաղաքացի կարող և իր պարտքը
կատարած լինել սոցիալիստական հայրենիքի
դիմաց, մտնելով կամ իբրեւ կարմիր բանակա-
յին վորեւ գործառու կամ իբրեւ կուսակցա-
նական դպրոց: Ռազմական դպրոցների յե-
ռամյա դասընթացն ավարտած հրամանատար-
ները պարտավոր են հրամանատարական պաշ-
տոն վարել յերեք տարի ևս կարմիր բանակի
շարքերում — այսպիսով մի տարի ուսանելու դի-
մաց — մի տարվա ծառայություն:

Իբրեւ յեզրակացություն մեր կարմիր ռազ-
մական դպրոցները ցարական ընթերցանա-
կերական դպրոցների հետ համեմատելու հա-
մար բերենք հետևյալ աղյուսակը:

Այստեղ առաջինը հին Ալեքսեյեյան դպրո-
ցն և, ներքինը՝ նոր 2-րդ Մոսկովյան հե-
տակ դպրոցը: Հաշիվը բերված և ամեն մի
100 կուսակցական համար:

Յարական Այեբուեկյան գայրոց
1894—95 քվականի

անձնական ազնվականներ —	44
ժառանգական	23
պատվավոր քաղաքացիներ	5
հոգևոր կոչումից	3
վաճառականներ և քաղքե- նիներ	20
գյուղացիներ	5
բանվորներ	0

100

Մոսկվայի Խորհրդային 2-րդ հեսեվակ գայրոց
1920—21 քվին

բանվոր	35
գյուղացի	60
այլք	5

100

10. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Յարական իշխանությանը բանակը ծառայում էր բանվոր դասակարգը և գյուղացիությունը ճնշելու և նոր յերկրներ գրավելու համար: Յարական իշխանությունը այդպիսի ոտար յերկրներ շատ էր գրավել և այնտեղ ապրողներին բոլորին ստրկացրել: Լեհերը, Ֆինլանդացիք, հայեր, վրացիք, ուկրաինացիք, թաթարները, հրեայաները, այդ բոլոր ազգությունները ապրում էին ցարական լծի տակ և իրավադուրկ գրության մեջ և ավելի մեծ բռնությունների յենթակա, քան թե ուրիշ բանվորա-գյուղացիա-

կան մասսաները: Յարական կառավարությունը ազեա մասսաներին գրգռում էր այդ ժողովուրդների դեմ, վորպեսզի իրենից դժգոհների ուշադրությունն ուրիշ կողմ դարձնի: Այդ կառավարությունը կազմակերպում էր ջարդեր և կոտորածներ, խանդարելով աշխատավոր մասսաներին միանալ իրենց ընդհանուր թշնամուցարիզմի դեմ:

Ցարիզմի ճնշման տակ գանվող ժողովուրդների համար ցարական բանակն ավելի ևս դաժան բանդ էր, քան ուրիշ զինվորի համար: Յարական զորանոցում լեհ, թուրք, հրյա զինվորին սպասում էր այնպիսի ծաղր ու ծանակ, վորից թաքնվել չէր կարելի: Թուրք զինվորը, վոր ուսներեն չէր հասկանում, իհարկե չէր կարող յուրացնել այն ինչ վոր նրան սովորեցնում էին, իսկ այդ չհասկանալու համար նա յենթարկվում էր նոր վիրավորանքի և պատիժների:

Խորհրդային իշխանությունը բոլոր ժողովուրդներին ազատում է ազգային ճնշումից, նա հռչակում է բոլոր ժողովուրդներին, բոլոր աշխատավորների հավասարություն, անկախ նրա հավատից և ծագումից:

Նա թողնում է յուրաքանչյուր ժողովրդի աշխատավորներին, վոր իրենք կազմակերպեն

իրենց. բանվորա-գյուղացիական իշխանությունը: Հին ցարական կայսրության տեղը ծագում են առանձին աշխատավորական, սոցիալիստական խորհրդային հանրապետություններ— Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելորուսիայի, Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ խորհրդային Հանրապետության ներսում կազմվել են ելի հետևյալ ազգային հանրապետությունները, բաշկիրներ, թաթարներ, կիրգիզներ, յակուտներ, Կարելիայի, Թուրքեստանի, Մերձվոլգյան, գերմանացու շրջանի կայսր: Այս հանրապետություններից յուրաքանչյուրը կառավարվում է իր խորհուրդների համագումարով և ունի իր կենտրոնական - գործադիր կոմիտեն և ժողովրդական կոմիտարների խորհուրդը:

Բայց այդ բոլոր հանրապետությունները կազմվել են իրենց յերկրի կառավարելու հեշտացնելու համար: Այդ հանրապետությունների մեջ վոչ մի թշնամություն չկա: Ընդհակառակը, նրանք օտարում են համերաշխ, աշխատելով մեկը մյուսին ոգնել բոլոր այն գործերում, վոր բոլոր հանրապետությունների համար ընդհանուր են: Մեր խորհրդային յերկրի ժողովուրդներն այգալիսի ընդհանուր գործեր շատ ունեն: Ամենից առաջ այդ ընդհանուր գործե-

րից է արդյունաբերությունը, այսինքն ֆարիկները, գործարաններն ու հանքերը: Այգալիսի խոշոր գործարաններից ամեն մեկը, վորտեղ ել գտնվելու լինի, ծառայում է վոչ միայն այդ քաղաքի կամ շրջակա նահանգների բանվորներին և գյուղացիներին, այլ բանում է ամբողջ յերկրի, ամբողջ բանվորա-գյուղացիական մասաների, բոլոր ժողովուրդների համար: Պուտիլովի գործարանը, վոր շոգեշարժներ և ուլաներ է արտադրում յերկաթուղու համար, խարկովի կամ Ուրալի յերկաթագործ գործարանները, Դոնի քարածուխի և Բագվի նավթահանքերը— այս բոլորն ել աշխատում են բոլորի համար: Դրա համար ել այս բոլոր գործարանների, ամբողջ յերկրի արդյունաբերության ղեկավարությունը գտնվում է Գերագույն Տնտեսական խորհուրդ կոչված ընդհանուր որդանի ձեռքում: Նույնը է յերկաթուղու վերաբերմամբ:

Այդ նույնն ավելի էս մեծ չափով վերաբերվում է մեր կարմիր Բանակին: Կարմիր Բանակը կոչված է պաշտպանելու խորհրդային իշխանությունը թշնամիներից: Ինչ ազգություններ ել վոր բնակվեն մեր խորհրդային յերկրի մեջ, նրանց թշնամին նույնն է՝ ոտաբերկրյա կապիտալիստներն ու կարվածատերերը և ուսս սպիտակ-գվաղիականները, վորոնք արտասահ-

մանից պատրաստում են հարձակում խորհրդային իշխանության վրա: Ընդհանուր քեհամուդեմ կռիվն էլ պե՛տ է ընդհանուր լինի: Այսպես է ծագում և զարգանում Կարմիր Բանակը: Ռազմական պայքարի գործում ամենից առաջ միացան մեր ժողովուրդների աշխատավորթյունը: Բանվորներն ու գյուղացիները ապստամբելով կալվածատերերի և կապիտալիստների դեմ պայքարի համար ջոկում էյին իրենց լավագույն մասը: Խորհրդային իշխանությունը գինում երնրանց և անկախ այն հանգամանքից, թե ինչ լեզվով է խոսում այդ կարմիր բանակայինը, վոր ազգությանն է պատկանում, նա ուղարկվում եր Կարմիր գնդերը, ընդհանուր ռազմական պայքարի ընդհանուր թշնամու դեմ: Այդ ռազմական պայքարի ընթացքում բոլոր ժողովուրդների աշխատավորները համախմբվում են և սովորում են գնահատել իրենց այդ միությունը:

Սաղաղ շինարարության ուղին բռնելով, Խորհրդային իշխանությունը վորոշում է ավելի ճշտել և կանոնավորել ժողովուրդների փոխադարձ հարաբերությունը և կազմում է առանձին ազգային հանրապետություններից և շրջաններից միասնական մի հզոր «Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միություն»: 1924 թվ. հունվարին արդեն տեղի յե

ունենում այդ Միության Խորհուրդների համագումարը: Այդ համագումարում ընտրվում է Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտե, վորը իր կազմից ջոկում է Միության Ժողովըրդական Կոմիտեների Խորհուրդը: Այն բոլորը ինչ վոր ընդհանուր է Միության մեջ ապրող ժողովուրդներին, միացած է այս բարձրագույն որդանների ղեկավարության տակ — արդյունաբերություն, հաղորդակցության ճանապարհներ, արտաքին առևտուր, ֆինանսներ, և վերջապես Կարմիր Բանակ:

Ցարական իշխանության բանակը ռուս կալվածատերերի և կապիտալիստների բանակ եր, վորի ձեռքով ցարը ճնշում եր մյուս ազգություններին: Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակը մեր միության բոլոր ժողովուրդների, միասնական բանակն է, վոր ընդհանուր ուժերով պաշտպանում է բոլոր ժողովուրդների ընդհանուր գույքն ու ազատությունը, ընդհանուր թշնամուց: Ցարական բանակում, այսպես կոչված, «այլազգիները» իրենց զգում էյին կարծես թշնամու բանակում: Կարմիր բանակում Կարմիր գինվորները իրենց զգում են մի ընտանիքի զավակներ, ինչ ազգությունից էլ նրանք լինեն: Ուստի վորտեղ էլ վոր կանգնած լինի այս կամ այն Կարմիր զորամասը, վոր ազ-

գության մեջ ել վոր գտնվելիս չինի, ամեն տեղ գտնում ե բարեկամական ընդունելություն, յուրաքանչյուր ժողովրդի համար ել նա հաւա-
գաս բանակ ե:

Վերցնենք որինակի համար Թուրքեստանի հանրապետությունը: Ապրում են այնտեղ զը-
խովսրապես արեւելյան ազգություններ—կիր-
դիզներ, ուզբեկներ, տաճիկներ, թուրքմեններ: Այս բոլոր ազգությունները՝ մուսուլմանական հավատի յեն, խոսում են մեզ դժվար հասկա-
նալի լեզուներով, մեր լեզուն ել բնավ չեն հաս-
կանում: Յարի ժամանակ ել այնտեղ բանակ եր
կանգնած, բայց այդ բանակը Թուրքեստանի ժո-
ղովուրդներին ճնշելու մի գործիք եր, ուստի
թուրքեստանցիք ել նրանց վրա նայում եյին
իրեւ բռնակալների վրա: Յերբ ցարը պատե-
րազմի ժամանակ կամեցավ այդ ժողովուրդնե-
րի գլուղացիությունից ղինվոր ժողովել իր բա-
նակի համար, տեղացիք ապստամբվեցին և ցա-
րական իշխանությունը ստիպված յեղավ նա-
հանջել, վորովհետեւ չկարողացավ տեղացինե-
րից ղինվոր հավաքել:

Իսկ այժմ այդ նույն Թուրքեստանում
կանգնած են մեր Կարմիր Բանակի զորամասերը:
Ազգաբնակչության հետ հարաբերությունները
յեղբայրական են: Աշխատավոր կիրգիզներն ու

ուզբեկները արդեն հասկացել են, վոր Կարմիր
զորամասերը պաշտպանում են նրանց իրենց
կալվածատերերից ու կուլակներից: Նրանք տե-
սան վոր կարմիր բանակայիները մեծ հար-
գանքով են վերաբերվում տեղացիների բոլոր
սովորություններին, և հավատին, վոր Կարմիր
Բանակը աշխատում ե ուշադրությամբ ուսում-
նասիրել այդ յերկրի կյանքը: Վերջերս, շնոր-
հիվ այդ յեղբայրական վերաբերմունքի, այդ
ժողովուրդների մեջ, վորոնք ղեռ մոտ ժամա-
նակներս ապստամբում եյին, յերբ ցարը կամե-
նում եր բռնի կերպով նրանց հավաքել իր բռ-
նակալական բանակում, նկատվում ե մեծ ցուն-
կուրյուն սովորել ուղղակիան գործը, մտնե-
լով Կարմիր Բանակի շարքերը և կազմակեր-
պելով ընդհանուր Խորհրդային զբոսի տակ
Թուրքեստանի ազգային զորամասեր: Աշխատա-
վոր կիրգիզներն ու ուզբեկները հասկացել են
թե ինչ խորը տարբերություն կա ցարական բա-
նակի և Կարմիր Բանակի մեջ և սկսում են ձրգ-
տել մտնելու վերջինիս շարքերը:

Կարմիր Բանակի շարքերում ընդհանուր հի-
մունքներով գտնվում են կարմիր բանակայիներ
մեր միության բոլոր ժողովուրդներից՝ վելիկո-
ռուսներ, բելուսուսներ, ուկրաինացիք, թաթար-
ներ, լեհեր, Նրյաներ, գերմանացիք, բաշկիրներ

կային: Կարմիր Բանակը լիակատար հարզանքով է վերաբերվում նրանց լեզվին և վորտեղ կարելի չէ, ուսուցումը նրանց մայրենի լեզվով ե կատարում: Ուկրաինացիք և թաթարները դրպրոցներում սովորում են իրենց մայրենի լեզուն: Ընթերցարանում և ակումբում գրքեր են ստացվում մայրենի լեզվով: Յեթե վաշտում Կարմիր բանակային թաթարները կամ ուկրաինացիք կազմում են կարմիր բանակայինների ընդհանուր թվի մեծամասնությունը, ապա քաղաքական աշխատանքներն ել (այսպես կոչված քաղժամը) նույնպես մայրենի լեզվով են տարվում:

Ռազմական ուսուցման ավելի մեծ աջություն համար Խորհրդային իշխանությունը աշխատում ե մի ալգուլյան կարմիր բանակայիններին մի զորամասում հավաքել և այնպիսի հրամատարների հանձնել, վորոնք կարող են կարմիր բանակայինների հետ նրանց մայրենի լեզվով խոսել: Այդպիսով հնարավորություն ե ստեղծվում ազգային Կարմիր զորամասեր կազմակերպելու: Այդպիսի զորամասերի կազմակերպության աջողությունը նպաստելու համար հարկավոր ե մի քանի տարիների ընթացքում մեծ նախապատրաստական աշխատանքներ կատարել, վորը կայանում ե գլխավորապես հրամանատարական կազմ պատրաստելու մեջ:

Մովետական կառավարությունը արդեն կազմակերպել ե մի քանի հատուկ ուղղման դպրոցներ առանձին ազգությունների համար—այսպիսի դպրոցներից են թաթարականը, Ուկրաինականը, հայկականը, վրացականը, և այլն: Այդպիսով մի քանի տարվա ընթացքում պիտի պատրաստվեն հազարավոր հրամանատարներ, այդ նույն ժողովրդի բանվորների և գյուղացիների շարքից դուրս չեկած, վորոնք և կարող են կանգնել նոր Կարմիր զորամասերի գլուխը:

Բայց այն ժամանակ ել, յերբ այդպիսի ազգային զորամասեր կկազմակերպվեն, Կարմիր Բանակն առաջվա նման ելի մեկ կմնա: Առաջվա նման ելի բոլոր զորամասերը մի ընդհանուր հրամանատարությունից տակ կմնան, կազմելով միասնական զինված բանվորա-գյուղացիական մի ընտանիք, վորոնք կոչված են պաշտպանելու բոլոր ժողովուրդների բանվորա-գյուղացիական մասսաները, նրանց ընդհանուր թշնամուց—համաշխարհային կապիտալից:

ԿԱՐՄԻՐ ՅԵՐԴՈՒՄ

ՀԱՆԴԻՍԱՎՍՐ ԽՈՍՏՈՒՄ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱ-ԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ ՄՏՆԵԼԻՍ

1. Յեա, աշխատավոր ժողովրդի զավակս, Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնների Միութեան քաղաքացիս, ընդունում եմ Բանվորա-Գյուղացիական Բանակի զինվորի կոչումը:

2. Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնների Միութեան և ամբողջ աշխարհի աշխատավորութեան առաջ, յեա պարտավորվում եմ պատվով կրել Կարմիր զինվորի կոչումը, բարեխղճաբար ուսումնասիրել ռազմական գործը և աչքի լուսի պէս պահել ժողովրդական և ռազմական գույքը փչացնելուց և հափշտակելուց:

3. Յեա պարտավորվում եմ խստիվ և անշեղ պահպանել հեղափոխական կարգապահութիւնը և առանց առարկութեան կտտարել Բանվորական և Գյուղացիական իշխանութեան կողմից նշանակված պետերի բոլոր հրամանները:

4 Յեա պարտավորվում եմ հեռու մնալ և

հեռու պահել ընկերներին այն բոլոր արարքներից, վորոնք վարկաբեկում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան քաղաքացու արժանապատուութիւնը, և իմ բոլոր գործողութիւններն ու մտքերն ուղղել բոլոր աշխատավորների ազատագրման վեհ նպատակին:

5. Յեա պարտավորվում եմ բանվորա-գյուղացիական կառավարութեան առաջին իսկ կոչին դուրս գալ պաշտպանելու Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնների Միութիւնը ամեն տեսակի վտանգներից և նրա բոլոր թըշնամիների վտանգութիւններից, նույնպէս և Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնների հանուն սոցիալիզմի գործի և ազգերի յեղբայրութեան մղելիք կռիւ մեջ չըխնայել վոչ ուժերս և վոչ անգամ կյանքս:

6. Յեթե յեա չար դիտումով հրաժարվելու լինեմ իմ այս հանդիսավոր խոստումից, թող ինձ վիճակվի ընդհանուր արհամարհանք և թող ինձ պատժի հեղափոխական օրենքի անողորձեռքը:

Դ Ե Կ Ր Ե Տ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ
ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՍՍԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Հոկտեմբերյան հեղափոխութեան որից ըս-
կըսած Խորհրդային Հանրապետութիւնն արդեն
շատ անգամներ հայտարարել է ի լուր ամենքին
իր խաղաղ մտադրութիւններն մասին և բազ-
մաթիւ անգամներ մյուս պետութիւններին ա-
ռաջարկել է ձեռնամուխ լինել սպառազինման
կրճատմանը:

Թեև այդ առաջարկութիւնը մինչև որս ել
բավարար լուծուած չի ստացել, այնուամենայնիւ
Խորհրդային իշխանութիւնը շարունակում է
անշեղ հետեւել իր խաղաղ քաղաքականութեան
ընդհանուր փոզուն, և զինված ուժերի ստեղծման
հարցում ձգտում է, հնարավորին չափ, մոտենալ
զինված ուժերի կազմակերպման այնպիսի ձևի,
վոր կարելի լինի աշխատավորներին, հնարավոր
յեղածին չափ, կարճ ժամանակով կտրել արտա-
գրական աշխատանքից:

Վերսիլլայի հիման վրա, Ս. Խ. Հ. Միու-

թեան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժո-
ղովրդական Կոմիտարների Խորհուրդը ժամանակը
սպասե՛ն և զանում Ս. Խ. Հ. Միութեան զինված
ուժերի շինարարութիւնը ուղղել դեպի միլիցիա-
կան սիստեմի գործադրութեան ճանապարհը, վոր
ներկայումս արտահայտւում է, ինչպես գոյու-
թիւն ունեցող կազրային գործատեւերի հետ
միաժամանակ յերկրային գործատեւերի կազմու-
թեան մեջ, այնպես և աշխատավորների ռազ-
մական պատրաստութեան իրագործման մեջ:

Յերկրային գործատեւերը կարմիր Բանակի
կազրային գործատեւերի հետ համահավասար
պէտք է կատարչալ մարտական պատրաստու-
թիւն ունենան: Յերկրային գործատեւերի ամեն
մի բանվոր և գյուղացի պէտք է դիտակցի, վոր
ինքը պատկանում է միասնական կարմիր Բա-
նակին, իսկ ռազմական գործը սովորող աշխա-
տավորները պէտք է հանգիստնան վստահելի
պահետ, ամեն րոպե պատրաստ Սոց. Խոր. Հան-
րապետութիւնների Միութեան պաշտպանութեան
համար կարմիր դրոշների տակ կանգնելու: Հան-
րապետութեան զինված ուժերի շինարարութեան
մեջ միլիցիական սիստեմի իրագործման նպա-
տակով Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և
Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը վորո-
շեցին:

**Ա. ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ՅՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՍԵՋ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆ-
ԹԱՑՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

1. Յերկրային սկզբունքներով կազմակերպ-
ված զորամասերի թիվն ու կազմը, իրենց կազ-
մակերպման շրջանում, սահմանում է Ս. Խ.
Հ. Մ. Ռազմա-հեղափոխական Խորհուրդը:

2. Հիշյալ սկզբունքներով կազմակերպված
զորամասերը բաղկացած են կազրից (մնայուն
կազմ) և փոփոխական կազմից:

3. Փոփոխական կազմի մեջ մնալու ժամա-
նակամիջոցը սահմանվում է 4 տարի:

Ծանոթություն.— Ս. Խ. Հ. Մ. Ռազմա-հե-
ղափոխական Խորհրդին, Աշխատանքի և Պաշտ-
պանության Խորհրդի հաստատությանը, իրա-
վունք է տրվում, սույն հոգվածում ցույց տրված
նորմայից շեղվել, նայած տեղական պայմաննե-
րին և զորքի առանձին տեսակներում ծառայու-
թյունը կատարելու առանձնահատկություննե-
րին:

4. Յերկրային հիմունքներով կազմակերպ-
ված զորամասերի կազրը (մնայուն կազմը) ծա-
ռայության ընթացքը կատարում է նույն պայ-
մաններով, ինչ վոր մնայուն բանակի կազրը:

5. Փոփոխական կազմը լրացվում է զինա-
պարտներով սկսած կոչվելու տարիքին հետեւող
տարիքից:

Ծանոթություն.— Փոփոխական կազմի մեջ
ընդունվելու նախորդ տարին, այդ կազմի մեջ ըն-
դունվելիք զինապարտներն անպայման անցնում
են նախապատրաստական յեռամսյա ժամանա-
կաշրջան, արտագորային կարգով: Առանց այդ անց-
նելու չեն կարող նշանակվել փոփոխական կազ-
մի մեջ:

6. Յերկրային զորամասերի մեջ նշանակ-
վելու յենթակա քաղաքացիների կատեգորիա-
ները վորոշելու կարգը սահմանվում է Ս. Խ. Հ.
Մ.-ն Ռազմա-հեղափոխական Խորհուրդը և հաս-
տատում է Աշխատանքի և Պաշտպանության
Խորհուրդը:

Ծանոթություն.— Յերկրային զորամասերի
մեջ նշանակվելու յենթակա չեն այն բանվոր-
ներն ու ծառայողները, վորոնք ազատված են
բանակի շարքերը զորակոչի միջոցով կանչվելուց:

7. Յերկրային զորամասերի փոփոխական
կազմի մեջ նշանակված զինապարտ քաղաքացի-
ները յենթարկվում են այդ զորամասերի համար
սահմանված ծառայություն կատարելու կանոն-
ներին և մասնավորապես պարտավոր են կա-
տարել նրանց համար սահմանված հատուկ հաշ-
վառության կանոնները՝ համապատասխան ռազ-
մական մարմինների պահանջով ներկայանալ
բժշկական քննության, ուսուցման գանադան
տեսակ հավաքուրդների և այլն:

Հավաքուրդների ժամանակ, և առհասարակ

գործամատուժ գտնված միջոցին, փոփոխական կազմը յենթարկվում երայրք ռազմական որենքներին իսկական ռազմական ծառայության մեջ գտնվողներին հետ համահավասար:

8. Փոփոխական կազմը ուսուցման և ուրիշ նպատակների համար կոչելու ժամանակամիջոցներն ու ժամկետները փորձում ե Ս. իմ. Հ. Մ. Ռազմա-հեղափոխական խորհուրդը, ամենից առաջ յենկելով ուսուցումը պլանորեն դարձնելու նկատառումներից, և հաշվի առնելով սովորողների աշխատանքային գործունեությունը տեղական պայմանները. փոփոխական կազմում անցկացրած ամբողջ չորս տարվա ընթացքում հավաքուղիների ընդհանուր տևողությունը չպետք է հինգ ամսից ավելի լինի, իսկ ամեն մի առանձին տարում փոշ ավելի յերկու ամսից:

9. Փոփոխական կազմի մեջ գտնվող զինապարտ քաղաքացիները, ուսուցման և հավաքուղի ընթացքում պահպանում են ծառայության կամ աշխատանքի տեղում ունեցած իրենց պաշտոնը:

10. Բոլոր ձեռնարկներն ու հիմնարկները, փորոնց մեջ աշխատում են փոփոխական կազմում գտնվող քաղաքացիք, պարտավոր են ուսուցման կամ հավաքուղիի ժամկետը հասնելիս անհապաղ աշխատանքից կամ զբաղմունքից ար-

ձակել այնպիսի անձերին, այնքան ժամանակով, փորքան վոր սահմանված ե ուսուցման կամ հավաքուղիի համար:

11. Փոփոխական կազմի մեջ գտնվող քաղաքացիներին փոշ վոր իրավունք չունի հեռանալ իր գործատու լրացման շրջանից առանց պատշաճ ռազմական պետերի թույլատվությամբ:

Այն քաղաքացիք, վորոնք փոփոխական կազմի մեջ են և 8-րդ կետի համաձայն ռազմական ուսուցման սահմանված ժամկետները չեն անցել, յեթե բնակություն տեղը փոխելիս եր դիվիզիայի շրջանի սահմաններից դուրս են գալիս, հաշվում են ռազմական ծառայությունը չանցած և յենթակա յեն մշտական զորքի շարքերը կանչվելու՝ ընդհանուր հիմունքներով:

Փոփոխական կազմի մեջ գտնվող քաղաքացիների տեղափոխման կարգը փորձող հիշա կանոնները սահմանվում են Ս. իմ. Հ. Մ. Ռազմա-հեղափոխական խորհրդից և հաստատվում Սշխատանքի և Պաշտպանություն խորհրդի կողմից:

12. Փոփոխական կազմի մեջ ծառայության ժամկետն ավարտած քաղաքացիները հաշվում են պահեստի մեջ, զինապարտների ընդհանուր հաշվառություն մեջ են մտցվում և պատերազմի ժամանակ ոգտադործվում են ինչպես միլիցիական հիմունքներով կազմված զորամասերը,

այնպես և կարմիր Բանակի մնացած մասերը լրացնելու:

13. Փոփոխական կազմի մեջ նշանակվելիս, այն քաղաքացիների համար, վորոնք իսկական զինվորական ծառայությունը մշտական բանակի շարքում են անցել, պահեստում մնալու ժամկետը կրճատվում է մի տարով՝ փոփոխական կազմի մեջ անցկացրած յուրաքանչյուր տարվա համար:

14. Զորական կարգով հավաքուրդների ժամանակ յերկրային մասերի փոփոխական կազմը ամեն տեսակի բավարարություն և ստանում մըշտական բանակի շարքերում, իսկական ծառայությունը կատարող զինվորականների հետ համահավասար:

15. Ուսուցումից և հավաքուրդից ազատ ժամանակը՝ փոփոխական կազմը իրավունք ունի կրելու իր զորամասի համար սահմանված զինվորական համազգեստը, վորը նա պատրաստում է իր հոգածությամբ:

16. Ռազմական պարագաներ ստեղծվելիս զորաժողով հայտարարելու ժամանակ ձեռնարկներն ու հիմնարկները պարտավոր են ամենակարճ միջոցում, վորը սահմանվում է Ռազմական իշխանության կողմից, ազատել փոփոխական կազմի մեջ յեղած քաղաքացիներին աշխատանքից

կամ ծառայությունից և նույն միջոցում նրանց հետ հաշիվները լիովին մաքրել:

17. Յերկրային տեղամասերի փոփոխական կազմի մեջ գտնվող քաղաքացիք այս վորոշման 7-րդ հոդվածը խախտելու, այլև զորաժողովի ժամանակ զորամաս ներկայանալուց խուսափելու դեպքում, կենթարկվեն պատասխանատվության քրեական որոնսգրքի 81-81-յե հոդվածների համաձայն:

18. Ս. Խ. Հ. Մ. Ռազմա-հեղափոխական Խորհրդին հանձնարարվում է այս վորոշման հիման վրա մշակել համապատասխան կանոնադրություն յերկրային սկզբունքներով կազմակերպված զորամասերի ծառայութան, նմանապես և այդ զորամասերի փոփոխական կազմի քաղաքացիների հաշվառության համար:

Բ. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒ-
ԹՅՈՒՆՆ ԻՐԱԳՈՐԾԵԼԸ.

19. Ս. Խ. Հ. Մ. Ռազմահեղափոխական Խորհրդին իրավունք է վերապահվում գործող որոնսգրության սահմանված կարգով պարտադիր զինվորական պատրաստության կանչել բոլոր քաղաքացիներին. այս կանչումը սկսվում է այն տարուց, վորի հունվարի մեկին լրանում է քաղաքացիների 16 տարին և շարունակվում է զինապարտների հաշվառության մեջ գտնված ամբողջ ժամանակի ընթացքում:

20. Ռազմական պատրաստութիւնը Մ. Խ. Ն. Մ. Ռազմա-հեղափոխական Խորհրդի հայեցողութեամբ իրագործվում է, ինչպէս արտագոր աշխուսուցման կարգով, այնպէս և Կարմիր Բանակի և նավատորմի մասերին կից կարճատե հաճաքուրդների յեղանակով:

21. 16-18 տարեկան հասակում գտնվող քաղաքացիներն յենթակա յեն նախնական պատրաստութեան, վոր կայանում է առավելապէս յերիտասարդութեան ֆիզիքական և տարրական ուղղմական դաստիարակութեան մեջ և տարվում է ուղղմական իշխանութեան ընդհանուր ղեկավարութեան և հսկողութեան տակ, քաղաքացիական կազմակերպութեանների ուժերով և միջոցներով: Հիշյալ ժամանակամիջոցի ընթացքում ուղղմական իշխանութեանը իրավունք է վերապահվում յերիտասարդութեանը կոչելու պարտադիր տրտադրաշին պարապմունքների, 4 շաբաթից կամ 160 ժամից վոչ ավելի ժամանակամիջոցով:

22. 19 տարեկան հասակից սկսած և մինչև զորակոչի տարին, քաղաքացիք յենթակա յեն ուղղմական նախակոչյան դասընթացի անցմանը ընդհանուր տեղութեամբ, վոչ ավելի 10 շաբաթից և ամեն անգամ վոչ ավելի չորս շաբաթվա ժամանակից:

23. Զորակոչի տարիքին հասած քաղաքա-

ցիք, վորոնք իսկական ղինվորական ծառայութեանը Կարմիր Բանակի և նավատորմի շաբաթում չեն կատարել, ինչպէս և այն ավելի տարիք ունեցող քաղաքացիք, վորոնք վորեւ պատճառով ուղղմական պատրաստութեան չեն ստացել, յենթակա յեն ուղղմական ուսուցման 5 տարվա ժամանակամիջոցում. այդ ժամանակի ընթացքում նրանք պարտադիր կերպով կանչվում են, ըստ Մ. Խ. Ն. Մ. Ռազմա-հեղափոխական Խորհրդի հայեցողութեան, ընդամենը 8 ամիս ժամանակով և ամեն մի տասնձին տարում վոչ ավելի քան 2 ամսով:

24. Կարմիր Բանակի և նավատորմի պահեստում գտնվող քաղաքացիք յենթակա յեն կրկնողական ուսուցման, կանչվելով Ռազմական իշխանութեան հաշվառման մեջ գտնված ժամանակամիջոցում, վոչ ավել քան 3 անգամ և մեկ ամսից վոչ ավել ժամկետով ամեն մի կրկնողական հաճաքուրդի համար:

25. Նախորդ կետերում հիշված բոլոր կարգի քաղաքացիների համար արտագորական ուսուցման ժամկետը և զորքերում պատրաստվելու տեղութեանը սահմանում է Մ. Խ. Ն. Մ. Ռազմա-հեղափոխական Խորհուրդը:

Փաճորութեան. — Այն քաղաքացիք, վորոնք ուղղմական պատրաստութեանը անց են կենում

արտագորական կարգով պետական հայթայթման յենթակա չեն և դրա համար վոչ մի վարձատրություն չեն ստանում: Իսկ ուսուցումը զորքերին կից անցնողները հավաքուղիի ժամանակ պետական ծախքով են պահվում:

26. Ռազմական պատրաստություն ստանալու միջոցին, թե արտագորական կարգով և թե զորամասերի կազմի մեջ, քաղաքացիք պարտականությունները կատարում են և պատասխանատվություն են կրում զինվորականների հետ համահավասար չափով:

27. Ս. Խ. Հ. Մ. Ռազմա-Հեղափոխական Խորհրդին իրավունք է վերապահվում յերկարացնելու ուսուցման ժամկետը ռազմական ծառայությունը կատարող այն քաղաքացիների համար, վորոնք ուսուցման հետևանքների վերջնական ստուգման ժամանակ, ցույց կտան վոչ բավարար առաջադիմություն, բայց վոչ ավելի քան մշտական զորքերի համար սահմանված ծառայության ժամկետից:

28. 16-18 տարեկան քաղաքացիներին, նախնական զինվորական ծառայությունից խուսափելու դեպքում (հոդված 21), պատասխանատվության կանչելու կարգը սահմանվում է առանձին կանոնադրությամբ:

Ավելի մեծ տարիք ունեցող քաղաքացիք ռազմական պատրաստությունից խուսափելու

դեպքում պատասխանատվության են կանչվում ընդհանուր հիմունքներով, Քրեական Որենսգրքի 81-81 — յե հոդվածների ցույց տված կարգով:

29. Այս դեկրետի 22, 23 և 24 հոդվածներում ցույց տրված քաղաքացիների ռազմական ուսուցումը իրագործում է Կարմիր Բանակի և Նավատորմի հրամանատարական կազմը, վորին պետք յեղած դեպքում ոգնության կարող են կանչվել հրամանատարական կազմի այն անձինք, վորոնք բանակի և Նավատորմի պահեստում են դրնվում, դրա համար սահմանված հատուկ կանոնների հիման վրա:

30. Ինչպես պետական, այնպես և մասնավոր ձեռնարկներում և հիմնարկներում ծառայության մեջ գտնվող քաղաքացիք ռազմական ուսուցումն ստանալու միջոցին պահում են այն բոլոր ռոճիկը, վոր նրանց հատկացված է ըստ ծառայության տեղի և պաշտոնի:

31. Ռազմական պատրաստության մեջ առաջադիմություն ցույց տված քաղաքացիներին, ինչպես և ռազմական ուսուցման համար կանչված պահեստում գտնվող հրամանատարական կազմի անձանց, Ռազմական իշխանության կողմից կարող են արտոնություններ շնորհվել, թե Կարմիր Բանակի և Նավատորմի շարքերի

մեջ ծառայութեան կանչվելիս և թե կրկնողա-
կան հաժախութեան հրավերովն:

ՅՈՅ. ԽՈՐՀ. ՀԱՆՐ. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈ-
ՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՆԱՐԻՍԱՆՈՎ

Ս. Խ. Հ. Մ.-ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՐ-
ՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱՆ՝

Կ. Գ. Կ. ԲԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՅԵՆՈՒԿԻԶԵ

Մասկով, Կրեմլ,

3 ապրիլի 1923 թ.

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Մ. Գեորգիևի	հոգ	պեմ և կազմ
Տպագր	և	
3.	1 տ. ինվարտ	դիմում
25.	1 տ. ինվարտ	ինչու
28.	9 տ. անտառներ և նրանց մեջ ամեն տեսակ գազաններ	անտառներ իսկ նրանց մեջ կան ամեն տեսակ գազաններ
31.	13 տ. պաշտպանվել	պաշտպանել
61.	10 տ. իրավաբանություն	իրավաբանություն
68.	11 տ. կենսա	կենսա
70.	5 տ. հայեր	հայեր
77.	9 տ. ուղեգրեր	ուղեգրեր

Յ Ա Ն Կ

Եջ

1. Դու պիտի կանչվես 3
2. Հին և նոր բանակ 4
3. Ինչպես և կազմվել, աճել և ինչ և տվել յերկրին կարմիր Բանակը 12
4. Յեթե խաղաղություն և ձեռք բերված, ապա ինչո՞ւ չեն արձակում կարմիր Բանակը . . . 25
5. Բանվորների և գյուղացիների բանակը . . . 36
6. Հանրապետության ղինված ուժերի կազմակերպությունը 48
7. Յերկրային զորամասերում 54
8. Քաղաքական աշխատանքը կարմիր Բանակում 57
9. Ուղիմ-վարժական հաստատություններ . . 64
10. Ազգային հարցը կարմիր Բանակում 70
11. Կարմիր յերդում 80
12. Դեկրետ 82
 - ա. Յերկրային զորամասերի կազմակերպությունը և նրանց մեջ ծառայության ընթացքի կատարումը 84
 - բ. Աշխատավորների Ռազմական պատրաստությունն իրագործելը 89

ՀԱՅԿ. ԽՄԲԱԳ.-ՀՐԱՏ. ԿՈՂԵԳԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ-
ԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԳԻՆԸ

1. Ենվալգ, Հրացանա-Հրաձգային գործ
փոխ. Գ. Կուրանյան 35 կ.
2. Լ. Ցոցկի, Կարմիր հուշատետր
Թարգ. Գ. Տ.-Ա. 20 կ.
3. Գորոզովի, Բանվոր դասակարգի և
Ռ. Կ. Կ. զրոշի տակ
Թարգ. Լ. Դանելյան 40 կ.
4. Կոզլովսկի, Քողարկում, I. մաս
Թարգ. Հ. Ալեքյան 20 կ.
5. Կոզլովսկի, Քողարկում II և III մաս
Թարգ. Հ. Ալեքյան 50 կ.
6. Մ. Ռաճես, Կարմիր բանակ
Թարգ. Մ. Տ.-Հովհաննիսյան . . . 10 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ Ի

- 1 Հուշատետրը հրացանաձիգ-կարմիր բանակայինի
1891 թվականի տիպարի 3 գծանի հրացանը
խնամակու համար:
- 2 Հետևակի մարտական ծառայություն

«Ազգային գրադարան



NL0220999

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊԵԿ